

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԸ
ԳՅՈՒՂՈՒՄ ՅԵՎ ՔԱՂԱՔՈՒՄ

ՁԵՌՆԱՐԿ ՆԱԽԱԳՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կազմեց՝ Մ. ԳՈՒՐԳԱՐՅԱՆ



372. 21

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԸ ԳՅՈՒՂՈՒՄ ՅԵՎ ՔԱՂԱՔՈՒՄ


ՁԵՌՆԱՐԿ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

17242
A 23389

Կազմեց՝ Մ. ԿՈՒՐԿԱՐՅԱՆ



Պես. Գիտ. հորհրդի կողմից բուլլատրվում է
իբրեվ ձեռնարկ մանկավարժ. դպրոցական
հիմնարկների յեվ նախապարոցական աւ-
սասավորների համար.



Հր. № 1077. Գրանդար № 2756 (բ), Տիրաժ 1200:

Պետրասի սոսնձին տպարան վարչապետուհի:

Պատկեր № 158

ԱՌԱՋԱԲԱՆ

Նախադպրոցական գործն իր ամբողջությամբ իրոր վոր «Հոկտեմբերի զավակն ե» հանդիսանում: Խորհրդային իշխանությունն իր կազմակերպման առաջին որերին նախադպրոցական գործը չանջատեց ժողովրդական կրթության սիստեմից յեվ յայն հնարավորություններ տվեց այդ նոր գործի զարգացման:

Անցած 10—12 տարիների ընթացքում նախադպրոցական աշխատանքն ունեցել է իր հետաքրքրական եվոլյուցիան. ցանցի տարերային աճումն—առանց մանկավարժական ուժի ու նյութական հնարավորությունների հաշվառման, նույնպիսի տարերային կրճատումն—կայուն բյուջեների անցնելու հետեվանքով. մանկավարժական աշխատանքի անորոշությունն ու նոր ուղիների վորոնումը, աշխատանքի մեթոդների աստիճանական նշտումն ու վերջապես նախադպրոցական դաստիարակության խորհրդային սիստեմի ձևակերպումը:

Նույն պատկերը տեսնում ենք Հայաստանում. 920—22 թ. կազմակերպչական շրջան, 922—24 թ. սիստեմների ազատություն յեվ մեթոդական վորոնումներ. 924—25 թ. ինքնորոշումն յեվ խորհրդային սկզբունքների աստիճանական յուրացումն, վոր շարունակվում է մինչև այժմ, հետզհետե խորհրդային մանկապարտեզի տիպը կերտելով: Առաջին 3 տարիները (20—23 թ.) ցանցն աճում է տարերային կերպով, հասնելով 30-ի. 23—24 թ. դառնում է բեկման տարի. ցանցն ընդգրկում է միայն 10 հիմնարկ, այնուհետեվ՝ պլանայնորեն զարգանալով. 927—28 ուս. տարում հասնում է 51 հիմնարկի:

Այժմ մենք ապրում ենք դարձյալ մի շրջան, յերբ հիմնականորեն խախտվում է պլանությունը. սակայն այս անգամ այլ գործոնների շնորհիվ. 925—26 թ. նախադպրոցական գործի մասսայականացման շրջանն եր. իրար յետևից, հաճախ անտես առնելով յուսորգանների պլաններն ու բյուջետային հնարավորությունները, նախադպրոց. ցանցին զարկ են տալիս մի շարք հասարակական կազմակերպություններ, վորոնց մեջ առաջնություն են զրավում կին-կազմակերպությունները, այնուհետեվ պրոֆիկազմակերպությունները (զբլխավորապես Յերևվանում) յեվ վերջապես (1927 թ.) սպառկոպերացիան, վորի ցանցը ներկայումս շատ տեղերում մրցում է յուսբաժինների ցանցի հետ:

Հասարակական այսպիսի նախաձեռնության շնորհիվ, չնայած

բոլոր թերություններին, թե կազմակերպչորեն չիվ թե աշխատանքների բովանդակության տեսակետից ներկայումս խ. հանրապետությունների շարքում նախադպրոցական հիմնարկների ցանցն Հայաստանում առաջին տեղն է բռնում, ընդգրկելով նախադպրոցական տարիքի յերեխաների մոտ 3 % (Ռուսաստանում 0,56%):

Սակայն այս հանգամանքն ստեղծում է նայել առանձնահատուկ դժվարություններ. — ընդգրկել ու ղեկավարել այս կուլտուրկենցադային շարժումը, պլանային հունի մեջ դնել այն, պատրաստված կադրեր ստեղծել, գիտական հիմնավորում տալ նախադպրոցական դաստիարակության, մասսայական աշխատանքի մեթոդները մշակել չիվ վերջապես կազմակերպչական պայմանները դյուրացնել (շենք, գույք չիվ այլն):

Այս պահանջներից մեկն է նայել հայերեն գրականության (նախադպրոցական) անհրաժեշտությունը, ինկատի առնելով, վոր մեր մասսայական նախադպրոցականը լայն հնարավորություններ չունի ոգտագործելու ռուսերեն մասնագիտական գրականությունը:

Ներկա ձեռնարկը առաջին փորձն է հանդիսանում այս ուղղությամբ, վոր միաժամանակ սպասավորելու յն թե քաղաքի չիվ թե գյուղի նախադպրոցականին, թե մանկավարժական թեքման դպրոցների աշակերտության չիվ թե այն բազմաթիվ սկսնակներին, վորոնք առանց հատուկ պատրաստության անցնում են նախադպրոցական գործնական աշխատանքներին:

Մեր հին նախադպրոցականներին, վորոնք համընթաց են յեղել մանկավարժական փորձերի ու մտքի առաջխաղացման, սույն ձեռնարկը կարող է պետք գալ իբրև մի անհրաժեշտ տեղեկատու, ուր ղեկավարը կարող է սխտեմատիկ կերպով հետեվել նախադպրոցական դաստիարակության տեսական ու (գլխավորապես) գործնական խնդիրներին, լրացնելով վերջիններս իր աշխատանքից բխող յեզբակացություններով ու համապատասխան գրականությամբ (ռուսերեն):

Մեր նախադպրոցական հիմնարկները (քաղտքի) զգալի դեր են խաղացել մանկավարժական պրոպագանդայի ու նախադպրոցական գաղափարների մասսայականացման գործում, սակայն միշտ ել զգացել են նման ձեռնարկի կարիքը:

Պարզ է, վոր այս ձեռնարկին հետեվելու յն նախադպրոցական մասնագիտական գրականության մշակումը (հայերեն), վորը վորոշ չափով կապահովի աճող ու ծավալվող նախադպրոցական գործը նորմալ հունի մեջ դնելու հնարավորությունը:

1929 թ., մայիս,

Յերեվան.

Մ. Դուրգարյան.

I. ՆԱԽԱԳԴՐՈՑԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՏԻՊԵՐԸ

Նախադպրոցական հիմնարկների տիպերը պայմանավորվում են թե՛ ընդհանրապես մեր շերտերի, և թե՛ մասնավորապես չուրաքանչյուր վայրի սոցիալ-տնտեսական և կուլտուր-կենցաղային պայմաններով (այդ հիմնարկների առաջադրած հիմնական նպատակները, ավելի վայրի արտադրական բնույթն ու ազգաբնակչության զբաղմունքները, կնոջ մասնակցությունն արտադրության մեջ և այլն): Այսպես—գյուղում թե՛ քաղաքում, գործարանին ու համայնացրած տնտեսություններին կից, ամառը կամ ձմեռը, բանվորների ու խորհրդային աշխատավորների շերտերին համար տարբեր հիմնարկներ են պահանջվում:

Իրենց գործունեության տեսկանություն տեսակետից հիմնարկները չերկու գլխավոր խմբերի չեն բաժանվում. ստացիոնար (Ֆնալուն) և սեզոնային հիմնարկներ¹. ստացիոնար հիմնարկներն են—արտադրություններին կից սեփական մանկապարտեզներ (մանկապարտեզ—ոջախ), ակումբներին կից մանկական սեյակներ, Յ-ժամյա (չերքեմն 4-ժամյա) տեղություններ մանկապարտեզները, ընկալաբանային կոոպերատիվներին կից խմբակները, մանկասերն ու գյուղական մանկապարտեզներ: Սեզոնային հիմնարկներն են—ամառային մանկական հրապարակներ (գյուղում, քաղաքում, հանքերում), մանկական ամառային գաղութներ: Խորհրդային նախադպրոցական հիմնարկների դաստիարակչական աշխատանքի սկզբունքները նույնն են՝ ըլլոր տիպի հիմնարկների համար. այդ սկզբունքները ըլլում են պրոլետարիատի դասակարգային նպատակներից և հիմնվում են արդի շերտայի շահերի ու հետաքրքրությունների, այդ շերտայի գիտական ուսումնասիրության վրա: Այդ սկզբունքներն են²—1) մանկան առողջացումը և կանոնավոր դարգացումը, 2) կուլտիվիստական ունակությունների պատվաստումը, 3) մանկան մեջ մատերիալիստական աշխարհայացքի կազմակերպման նպաստելը և 4) մանկան ակտիվ ստեղծագործական

¹ Виленская—Дошкольное строительство, 1929 г.

² Залкинд—Вопросы сов. педагогики.

» —Доклад на 3-ем Всер. съезде.

ուժերի զարգացումը: Այս սկզբունքները հնարավոր և իրականացնելը չեթե ապահովված են նախազարոցական հիմնարկի առաջ դրված հեռակալ խնդիրները - 1) մանկհիմնարկում սոցիալ-աշխատանքային ուղղութիւն ստեղծելը, 2) շրջապատող կյանքի ու արդիականութեան հետ կապ սահմանելը, 3) հետախուզական մեթոդներով բնութեան չեզուայթների մատերիալիստորեն ըմբռնելը և 4) մանկավարժութեան հիմնավորված այնպիսի միջավայրի կազմակերպելը, վորը նպաստի չերեխայի ակտիվ ու ստեղծագործական ուժերի դրսևորման ու զարգացման (նյութի բնտրութիւն, մանկան խաղի կազմակերպումն ու ստիմուլացիան և այլն):

II. ՆԱԽԱԳՊՐՈՅԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Նախազարոցական տարրեր տրպի հիմնարկները կազմակերպչական շատ բնդհանուր կողմեր ունեն: Չնայած այս հանգամանքին, կազմակերպման ձևերը չեն կարող քարացած բնույթ կրել. չուրաքանչյուր հիմնարկ, իբրև կենդանի որգանիզմ, չի կարող կղզիանալ իր մեջ, կարվել միջավայրից ու անտես առնել շրջապատող պայմանները: պետք և հաշվի առնել այդ միջավայրի առանձնահատուկ պահանջներն ու ըստ այնմ չուրաքանչյուր հիմնարկ ձևակերպել իրեն բնորոշող կազմակերպչական կառուցվածքում:

Նյութական պայմանների նշանակութիւնը մանկհիմնարկում շատ կարևոր ակղ և բռնում չերեխայի համար: մանկհիմնարկի վողջ կահավորութիւնը մի ֆոն և հանդիսանում, վորի վրա դարգանում և մանկական կոյեկտիվի կյանքն ու գործունեութիւնը: նպատակահարմար, առողջ չենքը, բավարար կահավորութիւնն ու նյութական միջոցները մեծ չափով վորոշում են հիմնարկի մանկավարժական ու հասարակական աշխատանքի հաջող ընթացքը:

Ներկայումս նակազարոցական հիմնարկները սոսկ մանկավարժական աշխատանքի լարորատորիաներ չեն, ալ բազմակողմանի կապերով կապված են միջավայրի, հասարակական կազմակերպութիւնների ու աշխատավորական լայն մասսաների հետ: Պետք և հաշվի առնել շրջապատի, տվյալ միջավայրի հնարավորութիւններն ու պահանջները, բանվորուհու և գեղջիուհու սպասելիքներն այդ հիմնարկներից: նախազարոցական հիմնարկի կազմակերպումը պետք և փաստորեն արդարացնի կինբաժինների, պրոֆմիութիւնների, կոոպերատիվ և ըանվորական կազմակերպութիւնների շահագրղւածութիւնը: Չպետք և

մոտանալ, վոր հրապարակն ու մանկապարտեզը լրացնելու չեն այն բացերը, վոր շատ զգալի չեն մեր լերեխաների ընտանեկան միջավայրում—անապաստանութիւնը, անխնամութիւնը, առողջապահական-սանիտարական աննախանձելի վիճակը, կուլտուրական կենցաղի և մտածոված ու հիմնավորված մանկավարժական ազդեցութեան բացակայութիւնը:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇ-
ԽԱՍԱՆՔՆԵՐԸ

Ինչպէս ասվեց, նախադպրոցական հիմնարկի կազմակերպման ժամանակ, պետք է հաշվի առնել այն միջավայրի պայմաններն ու պահանջները, վորին սպասարկելու չէ հիմնարկը: Որինակ—յեթե հիմնարկն սպասավորելու չէ բանվորների լերեխաներին, աշխատանքը տեւելու չէ որական 8—9 ժամ. յեթե ծառայողների ու տնտեսուհիների լերեխաներին—5—6 ժամ: Նույնը գլուղում. ամառը, գլուղատնտեսական աշխատանքների լիսուն շրջանում հիմնարկը (հրապարակ, մանկապարտեզ) գործելու չէ որական 8—10 ժամ, լերեխն ել ավելի, մինչդեռ ձմեռը կարելի չէ բավականանալ 5—6 ժամով:

Մանկապարտեզի տեղն ընտրելիս պետք է աշխատել, վոր մոտ լինի ձեռնարկութեան (գործարան, կոլտնտեսութիւն), այդ ձեռնարկում աշխատող բանվորների հանրակացարաններին: Յեթե թաղային մանկապարտեզ է, պետք է մոտ լինի այդ թաղում ապրող լերեխաների մեծամասնութեան:

Տեղն ընտրելիս պետք է հաշվի առնել նաև սանիտարական-առողջապահական պայմանները. տեղը պետք է չոր լինի, արևոտ, ըստ հնարավորութեան բարձր դիրք ունենա. ցանկալի չէ, վոր մոտակայքում լինի պուրակ, պարտեզ, ջուր և այլն. հիմնարկին կից պետք է լինի բավականին ընդարձակ հարթ հրապարակ, թեկուզ և փոքր հողամաս. առաջինն անհրաժեշտ է լերեխաներին խաղալու, իսկ հողամասը՝ աշխատելու համար: Հիմնարկին մոտ չպիտի լինի առողջութեան համար վտանգավոր՝ փոսեր, ճահճուտներ, ազրակուլտեր և այլն:

Նախքան հիմնարկը կազմակերպելը պետք է ծանոթանալ ընկալութեան կուլտուրական մակարդակին, արտադրական աշխատանքի բնույթին և նրա պահանջներին, կենցաղային պայմաններին, պետք է հաշվի առնել՝ ինչպիսի կազմակերպութիւններ կան—կուսակցական, խորհրդային, հասարակական և ինչ վերաբերմունք ունեն սրանք դեպի կազմակերպվող մանկհիմնարկը:

Այս ծանոթութիւնը ձեռք բերելուց հետո պետք է ընթացք տալ հետագա աշխատանքներին.

ա) կապ սահմանել գոյութիւն ունեցող հիմնարկներին հետ.—քա-

դաքում՝ կուս և ԼԿՅեՄ բջիջներէ, գործարկումի, կուլտիոմիսայի, կին-
բաժնի, պիտներնների, կոոպերացիայի (սպասուղական, բնակարանային)
հետ. գլուղում—ըրջործկոմի, գլուղխորհրդի, կին-հրահանգչուհու կամ
պատգ. ժողովի, փոկի, կոոպերացիայի, Հողանտառ Միութիան, պիտ-
ներնների հետ և այլն: Կապի նպատակն է—բոլորին ներգրավել հիմ-
նարկի կազմակերպման և հետագա աշխատանքների մեջ, սպասագոր-
ծելով թե ագիտացիայի ու պրոպագանդայի և թե կենդանի գործակ-
ցութիան ու ֆինանսավորման խնդիրներում:

Կապի և գործակցութիան խնդիրը կարելի չի դնել ալս կազ-
մակերպութիւնների ներկայացուցչական ժողովում, վորտեղ հատուկ
դեկուցում և տրվելու մանկապարտեզի (կամ հրապարակի) նպատակ-
ների ու խնդիրների և հասարակական կազմակերպութիւնների դերի
ու նշանակութիան մասին:

Ժողովը նշում է այն միջոցները, վոր ապահովելու չի հիմնարկն
ու նրա առաջիկա աշխատանքը, պարզելու չի բլուջիլի աղբուրները, նա-
խահաշիվ և կազմելու և այլն. զեկավարող ու շահադրգուլած մարմին-
ներից ընտրվում է մի հանձնաժողով, վոր մանկհիմնարկի աշխատա-
կիցների հետ գուղընթացարար ընթացք և տալիս այդ վորոշումներին:

բ) Նախապատրաստական աշխատանքների մլուս մոմենտը—կապի
սահմանումն և անկազմակերպ բնակչութիան հետ: Յեթե կուլտուրա-
կան մակարդակը ցածր է, նոր կենցաղի ազդեցութիւնը դուռնս զգալի
չն, չեթե մանկապարտեզի կամ հրապարակի կազմակերպման գաղա-
փարը զժվարութիւնների չի հանդիպում, անհրաժեշտ է աղիտացիա
ու պրոպագանդա մղել բնակչութիան մեջ վերոհիշյալ կազմակերպու-
թիւնների միջոցով: Այս գեպքում պետք է ոգտագործել բանվորա-
կան, գլուղական, պատգամավորական, կոոպերացիայի ընդհանուր
ժողովները, խրճիթ-ընթերցարանը, պատի լրագրերը, մոգական լապ-
տեր, համապատասխան պլակատներ և այլն, վորոնք պարզելու չեն
նախադպրոցական դաստիարակութիան նշանակութիւնն ու անհրա-
ժեշտութիւնը: Յերբ այդ անհրաժեշտութիւնն արդեն կզգան ու կհա-
մողվեն, պետք է հալտարարել բացումն ու ցուցակագրել չեռեխաներին:
Յերեխաների կազմը պարզելուց հետո անհրաժեշտ է ծնողական ժողով
հրավիրել, վորը պարզելու չի ծնողների մասնակցութիւնը հիմնարկի
կազմակերպման ու աշխատանքների մեջ (մասնակցութիւն անդի, կա-
նավորութիան ծախսերին, հերթապահութիւն, ընտանիքներէ ալ-
ցելութիւն և այլն): Ծնողները տալիս են իրենց ներկայացուցիչները,
վորոնք մասնակցելու չեն նախապատրաստական աշխատանքներին,
մինչև հիմնարկի խորհրդի ընտրվելը:

կազմակերպված ու անկազմակերպ բնակչութիւն հետ կապ սահմանելուց, շենքն ընտրելուց և հիմնարկի նյութական բազան պարզելուց հետո նախապատրաստական աշխատանքները կարելի չէ համարել վերջացած և պետք և անցնել հիմնարկի կազմակերպման բուն աշխատանքներին:

ՀԻՄՆԱՐԿԻ ՆԵՐՔԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

ՅԵՐԵՒԱՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵ-
ԼՈՒԹՅՈՒՆԸ¹

Յերեխաների քանակը վորոշելիս պետք և չերկեմ ընդունել այն կարիքը, վոր զգում են ծնողները մանկապարտեղ (կամ հրապարակ) ունենալու հարցում և այդ հիմնարկի նյութական հնարավորութիւնները:

Յերեխաների ընտրութիւնը կատարելու համար կազմվում և (չեթե խորհուրդը դեռ ևս չի կազմված) ընդունող հանձնաժողով, վորի կազմի մեջ մտնում են հիմնարկի մանկավարժ-աշխատակիցներն ու մծիչը (չեթե կա), կուսակցական-խորհրդային և հասարակական կազմակերպութիւնների ներկայացուցիչները և հատկապես այն ձեռնարկի ներկայացուցիչը, վորի (ձեռնարկի) աշխատավորների չերեխաներին և սպասավորելու մանկհիմնարկը (կոոպերացիա, գործարան, կուտնտեսութիւն և այլն):

Հանձնաժողովը (կամ խորհուրդը) պարզում և չերեխաների սոցիալական ու տարիքային կազմը, չեթե տվյալները կասկածելի չեն կամ բավարար չեն, դիմում և պատշաճ հիմնարկներին (գյուղխորհուրդ, Զագս և այլն) կամ այցելում և դիմող ծնողների տները և այնուհետև ընտրութիւնն և կատարում. առաջին հերթին ընտրում են բանավորներին, չքավոր գյուղացիներին ու բարակներին չերեխաներին, վորոնք անապաստան ու անխնամ են ընտանիքում, այնուհետև, տեղ լինելու դեպքում, ընտրութիւնը կատարվում և մնացած թեկնածուներին:

Ընդունված չերեխաները բժշկական քննութիւն են չնթարկվում: Ծանր ժառանգութիւն ունեցող (ընկնավոր, մտավորապես հետամնաց և այլն) և վարակիչ հիվանդութիւններով տառապող չերեխաներին չպետք է ընդունել մանկհիմնարկ: Թեթև վարակիչ հիվանդութիւն (քոս, տրախոմա) ունեցող չերեխաներին պետք և նախապես բժշկել և ապա ընդունել մանկապարտեղ կամ մանկական-հրապարակ:

¹ Տեղեկագիր № 2-3, 927 թ. «Նախադպրոցական հիմնարկների կանոնադրութիւն»:

Մանկհիմնարկի անձնական կազմը բաղկացած է մանկավարժներից ու տեխնիկական աշխատակիցներից, վորոնց քանակը պայմանավորվում է շերիխանների թվով և աշխատանքի որվա տեղում թվամբ: Առհասարակ նորմալ մանկապարտեզն ունենում է 3 խմբակ՝ 50—60 շերիխաներով, 3 ղեկավարներով, վորոնցից մեկը միաժամանակ վարիչի պաշտոնն է տանում. տեխական մանկապարտեզում (6 ժամ և ավելի) ցանկալի չե առանց խմբի վարիչ ունենալ. շերիխանները տրվում է մեկ անդամից ավելի (նախաճաշ, ճաշ, նախընթերթ), այդ դեպքում անհրաժեշտ է ունենալ շերիխորդ տեխնիկական աշխատավոր, խոհարար, սնտեսական մասի վարիչ. մանկապարտեզի կազմի մեջ է մտնում նաև բժիշկը, վորը կարող է այդ պաշտոնը համատեղել մի այլ պաշտոնի հետ կամ մի քանի մանկապարտեզների (2—3) բժիշկ համարվել:

Տարիքային խմբավորման դեպքում այդպիսով մի ղեկավարին ընկնում է մինչև 20 շերիխա. տեխական մանկապարտեզում (6 ժամից ավելի) կամ մանկոջատում (8—10 ժամ) անհրաժեշտ է ունենալ 2 հերթի աշխատակիցներ:

Թե վարիչը և թե ղեկավարներն ունենալու չեն հատուկ նախագյրոցական կրթություն:

ՄԱՆԿԻՄԱՐԿԻ ԾԵՆՔ

Շենքը մեծ նշանակություն ունի պարապ-

մունքների կանոնավորութլան համար, թե

մանկավարժական և թե առողջապահական-սանիտարական տեսակետից: Այստեղ կարևոր է թե սենյակների քանակը, թե մեծութլունը և թե նրանց դասավորութլունը: Բացի բուն շենքից մեծ կարևորութլուն ունի նաև հիմնարկին կից հողամասը և ոժանդակ շենքերը (հողամաս, բակ, հրապարակ, թռչնոց, փալտնոց և այլն):

Հիմնական շենքն ունենալու չե աշխատանքի սենյակներ, հանդերձարան, լվացարան, զուքարաններ, խոհանոց և պահեստ՝ մթերքների և զուքրի պահպանութլան համար: Ընդարձակ շենք ունենալու դեպքում լավ կլինի սենյակներ տրամադրել նաև սեղանատան, բժշկի, գրասենյակի և թանգարանի համար:

Աշխատանքի սենյակներն ունենալու չեն իրենց առանձին մուտքերը, իրար շխանգարելու համար:

Աշխատանքի սենյակները միաժամանակ կարող են սեղանատան փոխարինել, շերիխան հարկավոր մաքրութլունը պահպանվի: Տեխական պարապմունքներ ունեցող մանկապարտեզներին անհրաժեշտ է նաև հանգստի սենյակ կամ ննջարան, զոնե փոքրերի (3—4 տ.) համար: Խմբական (աշխատանքի) սենյակները պետք է մեծ լինեն, լուսավոր

և արևոտ: Յանհայրի չե ունենալ նստե մի ընդարձակ սենյակ չերեխաների համախմբման (տոների, ռիթմիկ շարժումների) ու ընդհանուր խաղերի համար: Մայրահեղ դեպքում չուրաքանչյուր մանկապարտեզի անհրաժեշտ է գոնե մեկ ընդհանուր դահլիճ (միաժամանակ սեղանատուն) և խմբական սենյակներ:

Բոլոր սենյակներն ունենալու չեն սղանքներ, վորոնք կամ մըշտապես (նույնիսկ կլիմայական պայմաններին) կամ որովա վորոշ ժամերին բաց են լինելու: Տաքչեղանակներին պարապմունքները տարվելու չեն բաց պատուհաններով կամ բացսթիչա, չեթե շենքն ունի հարմար պատշգամբ կամ վերանդա:

Հողամասը պետք է ցանկապատած լինի. շենքին կից լինելու չե հարթ և ընդարձակ խաղահրապարակ, ծաղկոց կամ բանջարանոց, հողամասի վորոշ մասում պետք է ծառեր կամ ծառուղիներ լինեն, չերեխաներին սովորոտ տեղեր (շոգ ժամանակ) տրամադրելու համար: Բակը պետք է մաքուր պահել, գուքարանները տաք են լինելու և շենքին կից, իսկ չեթե աչգ անհնար ե (կոչուղի չկա և աչքն), աչգ դեպքում շատ հաճախ պետք է մաքրել և գնալ-գալու հարմարություն ստեղծել: Աղբանոցը կամ աղբի արկղը պետք է հեռու շինել:

Կահավորությունը մի մասն է աչքն չեթա-
ՄԱՆԿԱՊԱՐՏԵՋԻ ԿԱՇԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ
կան միջավայրի, վորի մեջ չերեխան ձեռք ե բերում իր փորձն ու կենսական ունակությունները, իր ինքնուրույնությունն ու ստեղծագործական ախտիվությունն և դրսևորում: Կահավորությունը ընտրելիս պետք է հաշվի առնել չերեխաների տարիքը, կարողությունները շարժվելու գյուրությունները, նաև մի շարք առողջապահական պահանջներ:

Աշխատանքի սենյակն ունենալու չե բավարար քանակությամբ սեղաններ և աթոռակներ, ամեն մի խմբում չերեխաների հասակին հարմար չափերով, պահարաններ—պիտուկներին ու նյութերի համաք և դարակներ չերեխաների աշխատանքների համար: Համապատասխան տիպի գուլք չուրենալու դեպքում պետք է հարմարեցնել չեղածը (սեղանի կամ աթոռի վորտներն իջեցնել, մեծ սեղանները կիսել և աչքն): Շատ ցանկալի չե, վոր մանկհիմնարկում չերաժշտական գործիք լինի. ամենից հարմարը—դաշնամուրն և, չեթե դեկավարներից գոնե մեկը գիտի նվագել:

Սեղանատունը հատուկ կահավորություն չի պահանջում. կարելի չե ոգտագործել չեղած սեղաններն ու աթոռները: Միաչն անհրաժեշտ ե ուտելու ժամանակ մոմալաթ (կլեյոնկա) փուել, վորն ամեն անգամ չվացվում կամ սրբվում է թաց շորով: Սեղանատանը կամ կից

անյակներում գտնվում է պահարանը, ամանեղենի համար. պահարանը պետք է փոքր (ցածր) լինի, վորպեսզի չերխաններն իրենք կարողանան հանել ու դարսել ամանները, գզալները և այլն: Ուտելու մոմենտները դաստիարակչական մեծ հնարավորություններ են տրամադրում (աշխատանքային, կուլտուր-առողջապահական, կոլեկտիվ ունակություններ), ուստի և պետք է համապատասխան կահավորություն տրամադրել: Ամեն մի չերխա պետք է առանձին աման, դզալ և պատառքազ (մեծերը) ունենա. ամեն մի խումբ պետք է ունենա մի քանի սղաման, հացի ափսեներ կամ զամբյուղներ, վորպեսզի չերխաններն քրենք կարողանան հաց վերցնել—առանց մեծերի ոգնություն:

Պետք է չերխաններին սովորեցնել անձեռոցիկների (սալֆետիկա) գործածություն, ուստի ցանկալի չէ, վոր չուրաքանչուր չերխա իր անձեռոցիկն ունենա, վոր պահվում է հատուկ ծրարում կամ դարակում, ամեն մեկի վրա առանձին պայմանական նշանով: Անձեռոցիկները պետք է մաքուր պահել և գոնե շաբաթը մեկ անգամ լվանալ ու հարթուկել: Թե ծրարները (կամ տոպրակները) և թե անձեռոցիկները մեծ ծախս չեն պահանջում. մեծերը 70—80 կոպեկանոց քաթանից կարելի չէ 4 հատ անձեռոցիկ կարել:

Ամեն մի խմբի համար պետք է հատուկ կաթնա (կաստրյուլիկա) լինի, վորով խոհանոցից ճաշ է ընդունվում. բացի այդ, պետք են շերիֆներ և տախտակներ, տաք կաթնաների տակ դնելու համար: Սուրճն ու կաթը պետք է հատուկ ամաններում պատրաստել. չերխանների հետ միասին ամանները լվանալու համար պետք է թաս, ջնջոցներ (մաշալիտ) ու սրբիչներ:

Սեզանատան կահույքը պետք է մաքուր և իր վորոշ տեղում պահել: Խոհանոցի մաքրություն ու կահավորություն վրա պետք է ուշ դարձնել, վորպեսզի ծուխ ու մուր, կեղտ ու խոնավություն չառաջանա. այդ դեպքում չերխանները կարող են խոհանոցում մասնակցել ինքնասպասարկման աշխատանքներին, մանավանդ չեթե վառարանը (պլիտա), սեղաններն ու աթոռակներն իրենց չափերով մատչելի չեն չերխաններին. հակառակ դեպքում կարելի չէ հատուկ անկուռն կադմակերպել խոհանոցում, չերխաններին մատչելի կահույքով. խոհանոցում աշխատելու ժամանակ չերխաններին պետք է հատուկ գոգնոցներ կամ շապիկներ (խալատ) հագցնել: Առասարակ ցանկալի չէ, վոր չերխանները մանկապարտեզում առանձին գոգնոցներ (ֆարտուկ) ու թեթե վոտնամաններ (չուստեր) ունենան, վոր կարելի չէ ձեռք բերել ծնողների հաշվին:

Տեական մանկապարտեզներում լերեխաների հանգստի համար պետք է մահճակալներ ունենալ, ըստ հնարավորութեան՝ ծալովի, վորպեսզի տեղափոխութունը հեշտութեամբ կատարվի և շատ տեղ չբռնեն։ Անկողինը պետք է բաղկացած լինի ներքնակից (խոտ կամ ծղոտ լցրած), նույնպիսի բարձից, սավանից և բարակ վերմակից, վոր պետք է աներից բերեն։ Մահճակալի լեռերը կտորից լինելու դեպքում (ՁԵՋԱԿԱ) ներքնակն ավելորդ է։ Մահճակալներ չունենալու դեպքում լերեխաներին կարելի չէ պառկեցնել հատակին՝ մաքուր գորգերի կամ խտրների վրա։ Իհարկե, անհրաժեշտ է հարկավոր մաքրութիւնը պահպանել։ հատակը սրբել թաց շորով, ննջարաններն ու անկողինները ողափոխել՝ ձմեռը պետք է զրուշանալ սառ հատակներին պառկեցնելուց։

Թե լվացարանը և թե հանդերձարանը պետք է բավականաչափ ընդարձակ, լուսավոր լինեն և համապատասխան կահավորութիւն ունենան։ Լվացարանները պետք է միջանի հատ (առնվազն 2—3) լինեն կամ մի ընդհանուր լվացարան, միջանի ծորակներով։ Յեթե լվացարան-սենյակն ընդարձակ է, կարելի չէ այդտեղ կախարաններ պահել՝ զարակներով, թե լեռնասրբիչները և թե ատամի խոզանակների ու փոշու համար։ Հակառակ դեպքում կախարաններն ու դարակները կարելի չէ տեղավորել աշխատանքի սենյակներում։ Լվացարան-սենյակում անհրաժեշտ են միջանի աթոռներ կամ նստարաններ, հերթի սպասողների համար։

Հանդերձարանում պետք է ցածր կախարաններ ունենալ, վորպեսզի լերեխաներն իրենք կարողանան կախել ու վերցնել շորերը։ Ամեն մի լեռեխա պետք է իր տեղն ունենա, հատուկ նշանով կամ նկարով նշանակած։ Ամենից ավելի նպատակահարմար են այն կախարան-պահարանները, վորտեղ ամեն մի լեռեխա իր դարակում տեղավորում է շորերն ու կրկնակոշիկները։ Այսպիսի կախարան կարելի չէ պատրաստել նաև հասարակ ձևով. տախտակին մի կեռ ամրացնել վերարկուի համար, վերևը մի դարակ՝ գլխարկի համար, ներքևում մի մեխ՝ կրկնակոշիկների տոպրակը կախելու համար, վորպեսզի լեռեխաները չխոնավեն և իրար չխառնեն շորերն ու կրկնակոշիկները։

Հանդերձարանում նույնպես անհրաժեշտ է նստարաններ ունենալ, մանավանդ փոքրիկներին հագցնելիս կամ շորերն հանելիս։

Ինչպես ասվեց, արտաքնոցները պետք է տաք, մաքուր լինեն և հարմարվեն լեռեխաների ինքնուրույն ոգտազորման։ Յեթե աթոռակը բարձր է, պետք է մի-լեռկու աստիճան սանդուխքներ ունենա. փոքրիկների համար պետք է առանձին աթոռներ պահել։ Թուղթը պետք

և հարմար տեղում կախել, իսկ կեղտոտ թղթի համար առանձին արկղ պահել (խուփով): Խեցիկն և միզանոթները պետք է լվացվեն ու լաւտաճանալին և հատուկ խուփերով ծածկվեն: Արտաքնոցում պետք է հատուկ շոր լինի (ձողի վրա) հատակը սրբելու համար:

Կահավորութեան մեջ ելական տեղ են բռնելու կենդանի անկլան և բակի կահավորումը, չերեխաների կլանքը բացթէյա պայմաններում կազմակերպելու համար (ձմեռը—սահնաւաներ, բահեր, ավելներ և այլն. ամառը—փոցիներ, ջրցիւրներ, դուլլեր և այլն). մանկան գործունէլութեան և ստեղծագործութեան բոլոր ձևերը պետք է ապահովված լինեն համապատասխան կահավորութեամբ. աշխատանքային գործունէլութեան պահանջները բավարարելու համար անհրաժեշտ են համապատասխան նյութեր ու գործիքներ (սղոց, բահ, փալա, ալլուս, թուղթ, ներկ և այլն): Այն դեպքում չերը կահավորութեւնն ու պիտուլքները պարզ ու դուրեկան են (գեղարվեստական տեսքը), համապատասխանում են առողջապահական-սանիտարական պայմաններին, — չերիսայի մեջ առաջացնում են աշխուժութեւն և ուրախ արամադրութեւն, վորը մեծ չափով նպաստում է մանկան ստեղծագործական ակտիւութեան:

Բավական չէ, սակայն, համապատասխան շէնք ու կահավորութեւն ունենալը. պետք է շարունակ հսկել թե շէնքի և թե դուլքի սանիտարական վիճակին: Այս վերջինի համար նույնպէս անհրաժեշտ է համապատասխան կահավորութեւն ու պիտուլքներ, Ողափոխութեւնը հնարավոր է, չեթէ լուսամուտներն ունեն ողանցքներ կամ վենտիլլատորներ (ողափոխող գործիքներ). մաքրութեւնը պահպանելու համար անհրաժեշտ են—խողանակներ, ջնջոցներ, դուլլեր: Հիմնարկը պետք է բավարար քանակութեամբ տաք և սառը ջուր ունենա: Մանկական հիմնարկը պետք է ապահովվի վառելիքով և ջերմացումը պետք է ռացիոնալ լինի, այնպէս վոր շարունակ հավասար ջերմութեւն պահպանվի:

Գրականութեւն.—

Аркин—Дошкольный возраст, гл. XII.

Тихеева.—Организация дет. сада.

Методич. письмо по дошк. восп. № 6.

Дедюлина—Успенская—Дет. сад в его оборудовании.

III. ՄԱՆԿԱՆ ԿՅԱՆԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

ՆՇԽԱՍԱՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ
ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐԸ

Յերեխաների հետ տարվող աշխատանքների լեյակետ են ծառայում նախադպրոցական դաստիարակութիան հիմնական սկզբունքներն ու խնդիրները: Յերեխայի կյանքը պետք է այնպես կազմակերպել, վորպեսզի նպաստի նրա առողջացման, կոյեկտիվ ապրելու և աշխատելու ունակութուններ պատվաստի, հնարավորութիւններ ստեղծի կուլտուր-առողջապահական, աշխատանքային ու կազմակերպչական միջարք ունակութիւններ ձեռք բերելու, հաղորդակից անի շրջապատող կյանքին և յերևույթների ճիշտ ըմբռնման նպաստի:

ՅԵՐԵՍԱՆՔԻ ԽՄԲԱՎՈՐ
ՐՈՒՄԸ

Վերոհիշյալ խնդիրների իրագործման համար անհրաժեշտ է հաշվի առնել յերեխաների տարիքային առանձնահատկութիւնները, ինկատի ունենալով այն, վոր նախադպրոցական հիմնարկն ընդգրկում է միջանի տարիքային խմբեր (3—8 տ.): Խմբավորման խնդիրը զբժվարանում է մանավանդ այն դեպքում, յերբ խմբերի թիվը սահմանափակ է (1—2 խումբ) և յուրաքանչյուր խմբակում կան տարբեր տարիքի յերեխաներ: Ահա թե ինչու մանկապարտեզում չեն կարող բազմամարդ խմբակներ լինել (20-ից ավելի):

Յերեխաներին խմբավորելիս պետք է հիմք ընդունել նրանց տարիքային առանձնահատկութիւնները և ըստ այնմ խմբավորել: Այսպես՝ նորմալ մանկապարտեզում (70—60 յերեխա) յերեխաներին պետք է խմբավորել մոտավորապես հետևյալ ձևով. փոքրերի խմբակը՝ 3—4 տարեկաններ, միջին խմբակը՝ 5—6 տարեկաններ և մեծերի խմբակը՝ յոթնամյակներ (6 տ. բարձր): Ինչպէս, չպետք է մոռանալ անհատական առանձնահատկութիւնները. զարգացման ընդհանուր մակարդակն ինկատի ունենալով, հարկ չեղած դեպքում այս կամ այն յերեխային անհրաժեշտ կլինի իր տարիքից բարձր կամ ցածր խմբակում տեղավորել: Այս տեղափոխութիւնները պետք է տեղի ունենան սկզբում, բացառիկ դեպքերում—կարելի չէ նաև աշխատանքների ընթացքում:

Տարիքային խմբավորումը, սակայն, չպետք է քաբացած ձև համարել. անհանդուրժելի չէ, յերբ խմբակները կզդիանում են իրարից և միմիայն սեփական հետաքրքրութիւններով ապրում. պետք է ստեղծել ընդհանուր մոժենտներ, ոպտագործել շփման առիթները. փոխադարձ ռգնութիւնն ու ալցելութիւնները, մանկական և հասարակական տոները, ընդհանուր խաղերն ու կքսկուրսիա-դրոսանքները լավագուցն միջոցներն են ալդպիսի շփման համար:

Բացի տարիքային խմբավորումից կա նաև խմբավորում ըստ հետաքրքրությունների կամ նյութի. որինակ, տարբեր տարիքի լեռնա-
ները (4 տ. և 5, չերբեմն նաև 6 տ.) միաժամանակ հետաքրքրվում են
միևնույն նյութով, միևնույն աշխատանքներով (կենդանի տնկույն,
աշխատանքային պրոցես, հաշվելու կամ կառուցողական աշխատանք-
ներ և այլն): Այսպիսի խառն (ըստ նյութի) խմբավորումն ունի իր
վորոշ առավելությունները—փոխադարձ շփումն, անմիջական հետա-
քրքրություն, ստեղծագործելու առավել հնարավորություններ և այլն:
Սակայն նման ձևով կազմակերպելու համար պետք են նաև մեծ հնա-
րավորություններ ու հարմարություններ—հատուկ մասնագետ աշխա-
տակիցներ (նկարիչ-քանդակող, չերաֆիշտ, մանկաբան-դեկավար և
այլն), հարուստ կահավորություն, ընդարձակ շենք և այլն,—մի բան,
վորից զուրկ են մեր մանկապարտեզները: Այս սկզբունքը վրո՞ւ չա-
փով պետք է գործադրել խմբակի ներսում, միևնույն սենյակում ստեղ-
ծելով առանձին աշխատանքների հարմարություններ, —առողջագոր-
ծական սեղան, կենդանի անյուրն և այլն. պետք է ոգտագործել նաև
ընդհանուր մոմենտները (տես վերևը). այսպիսի լինթախմբեր անխու-
սափելիորեն առաջանում են մանավանդ այն դեպքում, չերք մանկա-
պարտեզը (որինակ, գյուղական նոր բացվող հիմնարկը) ունի միայն
մեկ խմբակ, վորը բազկացած է տարբեր տարիքի լեռնաանրից:

Խմբավորման խնդիրը հարթելուց հետո սկսվում է մանկական
կոլեկտիվի կազմակերպման աշխատանքները: Պետք է առաջին շրջա-
նում կազմակերպել ընդհանուր որակարգը (распорядок жизни), ծա-
նոթանալ լեռնաանրին, նրանց ունեցած մտապատկերների և ունա-
կությունների ձևին ու չափին. այս բոլորից հետո կարելի է դնել աշ-
խատանքների (ինքնասպասավորման) բաշխման և ընդհանուր ռեժիմի
սահմանման հարցերը:

ՄԱՆԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՌԵՃԻՄԸ

Հիմնարկի աշխատանքի առաջին որերից ճիշտ և կայուն ռեժիմի
սահմանումը մանկան կյանքի հիմնական մոմենտներից մեկն է հան-
դիսանում: Ռեժիմի նշանակությունը շատ մեծ է լեռնաանրի դաս-
տիարակությունից դրժում. նա վորոշ կազմակերպվածություն է մտցնում
լեռնաանրի մեջ և սովորեցնում է ամեն ինչ իր ժամանակին կատարել,
կոլեկտիվի կյանքում վորոշ կանոններ և մտցնում, սովորեցնում է
լեռնաանրին լինթարկվել ընդհանուրի համար սահմանված կարգերին:
Մյուս կողմից կանոնավոր ռեժիմը մանուկների առողջացման հիմնքն



և կազմում: Արևի, ջրի և ողի սիստեմատիկ ոգտադործելը, չերեխաների կանոնավոր սնունդը, հանգստի և աշխատանքի անհրաժեշտ հաջորդականութիւնը, պարապմունքների և աշխատանքային պրոցեսները կազմակերպման ժամանակ չերեխաների ընդհանուր զարգացման և առողջական վիճակի հաշվառումը, — այս բոլորը հիմք և կազմելու մանկան կյանքի ուժի մի կառուցման:

ԲԺՇԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Ռեժիմի այս բոլոր մոմենտները պետք և զանազան չեղանակներով կիրառվեն, հաշվառուելով չերեխաների առողջական վիճակը և չուրաքանչյուր խմբի տարիքային կազմը:

Այս պատճառով ել ուժի մի սահմանումն ու գործադրութիւնը բժշկի մասնակցութեամբ և տարվելու: Բժշկի աշխատանքն սկսվում և ընդունելութեան ժամանակ՝ չերեխաներին բժշկական քննութեան չեքարկելու և առողջական ընդհանուր վիճակը պարզելու աշխատանքով: Մի կողմից այս ավանդները, մյուս կողմից մանկան միջավայրն ու ընտանեկան պայմաններն ուսումնասիրելուց ստացած արդյունքները, — հնարավորութիւնն են տալիս բժշկին, հիմնարկի կողմից հետ միասին այնպիսի ուժի մի սահմանելու, վոր համապատասխանում և չերեխաների ավելի կազմին և իրադործելի չե գոյութիւնն ունեցող պայմաններում:

Հետագայում բժշկի սիստեմատիկ հաճախումներն անհրաժեշտ են ուժի մի գործադրութեան վրա հսկելու, հարկ չեղած փոփոխութիւնները քննելու և մտցնելու, առաջնորդվելով հիմնարկի կյանքում առաջացած պայմանների փոփոխութեամբ (տարվա չեղանակը, գաղութ փոխադրվելը և այլն):

Տարեկան չերկու անգամ բժիշկն ընդհանուր քննութեան և չեքարկում չերեխաներին, կշռում և չափում և նրան, վորպեսզի հնարավոր լինի պարզել չերեխաների ընդհանուր զարգացման ընթացքն ու գործադրվող ուժի մի արդյունքները:

Բացի այդ, պետք և կապ պահպանել ավելի վաղում կամ թաղում գտնվող բուժարանի հետ, վորպեսզի չերեխաներին հարկ չեղած դեպքում անհրաժեշտ բուժողութիւնը ցույց տրվի կամ հիվանդ չերեխանի տունը բժիշկ ուղարկվի:

Բժիշկը կարևոր աշխատանքներ և տանում նաև հիմնարկում առողջապահական-սանիտարական դրութիւնն ստեղծելու և հետեւելու գործում:

Չերեխաների առողջացման և նրանց մեջ առողջապահական-սանիտարական ունակութիւններ պատվաստելու գործում հիմնական տեղ և զբաղում ջրի, արևի և ողի ոգտադործումը: Պետք և խիստ հետեւել, վոր չերեխաներն սկզբից և եթ տներինց մաքուր դրութեամբ հաճախեն: Սակայն

ՅԵՐԵՍԱՆԵՐԻ ԱՌՈՂՋԱՅՈՒՄԸ
ՄԵՆ ՈՒ ԱՌՈՂՋ-ՍԱՆԻՏԱ-
ՐԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒՅՑՈՒՆԵՐԻ
ՄԱՍՎԱՍՏՈՒՄԸ

6828

11

17076



միաժամանակ պետք է կարգ սահմանել հիմնարկում, վորպեսզի ամեն որ լերեսը, ձեռները, վիզն ու ախանջները սապոնով լվանան, տառաները մաքրեն, և, լիթե հնարավոր է, մարմինը շփեն կամ լվանան մինչև մեջքը: Այսպիսով լերեխաները ձեռք են բերում լվացվելու կանոնավոր ձևերի յուրացումը և նրանց մեջ սովորույթ է դասնում այդ բանն ամեն որ, վորոշ ժամանակ կատարելը:

Որվա բնթացքում, մանկան կյանքի այս կամ այն մոմենտին զուգընթաց, պետք է սովորույթ դարձնել ձեռները լվանալ ուտելուց առաջ, կավի կամ բանջարանոցային աշխատանքներից հետո, արտաքնոց հաճախելուց հետո, բերանը վողոզել ուտելուց հետո և այլն:

Այս սովորութունները պետք է աստիճանաբար ամրացնել լերեխաների մեջ, այն էլ տարբեր լեզանակներով զանազան խմբերում: Լվացվել սովորեցնելու համար, որինակ, առաջին որերը պետք է պահանջել, վոր լերեխաները կանոնավոր լվանան ու սրբեն ձեռները, ապա գեմքը, վիզը և այլն, այսպիսով հետզհետե բարդացնելով հիշյալ պրոցեսը:

Անձնական խնամքի մյուս ունակութուններից կարևոր է հագուստի խնամքին ընտելացնելը (մաքուր զգեստ, վեր քաշած զուլպաներ, կոճկած թևեր ու ոձիք և այլն), թաշկինակի գործածութունը, կանոնավոր հագնվելը, գրպանների ոգտագործումն և այլն:

Ժամանակ առ ժամանակ պետք է խուզիլ մազերը, խսկ շաքաթը մեկ անգամ լեղունգները կտրել: Իսկ ընդհանրապես՝ պետք է մազերի ու լեղունգների մաքրությանը հետևել:

Յերեխաների առողջացման անհրաժեշտ պայմաններից մեկն է ուղի ոգտագործելը: Այդ պատճառով անհրաժեշտ է ամեն որ, անկախ լեզանակից, վորոշ ժամանակ բաց ողում լինել (բացի անձրևի ու սառնամանիքի ժամանակ): Յրտերին, չմրսելու և հաճելի ժամանցի համար, անհրաժեշտ է դուրսը վորևե բանով դրաղեցնել նրանց, խաղալ, աշխատել, վազել և այլն: Իհարկե, պետք է հետևել, վոր հագուստը տաք է հարմար լինի, չխանգարի լերեխային և այլն, վորի համար վորոշ աշխատանք պետք է տանել նաև ծնողների հետ:

Բակը կամ հողամասը այնպես պետք է հարմարեցնել, վորպեսզի հնարավոր լինի լերեխաների գործունակութունը կազմակերպել, — բլրակ շինել, սահնակներով սղալ, ճանապարհները մաքրել և այլն: Բակի աշխատանքների ու խաղերի համար պետք է ձեռք բերել թիակներ, սահնակներ, պատգարակներ՝ քարերի, հողի և ձյունի համար, ավելներ՝ ճանապարհները մաքրելու համար և այլն:

Բնության գործոնների ոգտագործումը լերեխաների առողջացման համար առավել ևս հնարավոր է ամառը:

Յեթե հիմնարկն ունի այդի կամ պարտեզ, ընդարձակ բակ կամ գոնե ցանկապատած հողամաս, այդ դեպքում չերեխաների ամբողջ գործունեությունն ու կյանքը պետք է բացոթյա ընթանա: Սրա համար պետք է համապատասխան կերպով հարմարեցնել հողամասը, հարթել այն, խաղի ու շարժումների հրապարակ պատրաստել, պարապմունքների ու հանգստի տեղ հարմարեցնել և կահավորել այն: Պետք է ոգտագործել նաև մերձակա բնական միջավայրը— գաշտ, անտառ, պուրակ և այլն— սխտեմատիկ զբոսանքների համար: Յեթե մտտակայքում զետակ կամ հոսող լճակներ կան, բժշկի թուչլտվությամբ չերեխաներին կարելի չե լողացնել, իսկ չլինելու դեպքում— պետք է սովորեցնել մարմինը շփելուն կամ ջրաթուրման (обливание, душ): Այս բոլորը կարելի չե պարզ կերպով կազմակերպել, առանց ծախսերի, ջուրն արևի տակ տաքացնելով (տաշտակի, թասերի մեջ և այլն) կամ ջրցրից չերեխաների վրա ջուր ամելով (հասարակ դուշ):

Վորպեսզի արևն ու ողը մատչելի լինեն չերեխայի մարմինն, պետք է ամառը թեթև շոր հագցնել (տրուսիկներ, կոմբինացիա)— բաց սրունքներով ու թևերով: Կարող է պատահել, վոր ծնողների համար անսովոր լինի այդ, պետք է հասկացնել նրանց, համողել, վոր այդ շորերն ալելի եժան են ու առողջապահական. պետք է ոգնել նրանց— ցույց տալ ինչ կտորից և ինչպես կարել: Հնարավոր դեպքում հիմնարկն իր սեփական միջոցներից է ձեռք բերում այդ զգեստները:

Գ Ր ա կ ա ն ու թ չ ու ն .—

Менчедич, письмо № 6.

Чаркин.—Дошк. возр. ч. II.

Чулицкая.—Основные задачи физ. культуры дошкольника.

ՄՆՈՒՆԴ

Նախագարոցական չերեխայի որգանիզմի առանձնահատկությունների շնորհիվ (շարժունություն և ուժեղ աճում) սննդի կազմակերպումն առանձնահատուկ տեղ է բռնելու մանկհիմնարկում: Առանց նորմալ սննդի անհնար է ապահովել մանկավարժական աշխատանքի հաջողությունը: Մննդի խնդիրը ճիշտ կազմակերպելու համար անհրաժեշտ է բժշկի մասնակցությունն ու հսկողությունը:

Մանկան որգանիզմը պահանջում է մեծ քանակությամբ սննդաբար նյութեր. բայց միայն քանակը բավական չե. սննդի վորակը պիտի բավարարի աճող որգանիզմի չուրահատուկ պահանջները: Ըստ բաղադրության սնունդը պետք է բազմազան լինի և պարունակի այն-

պիսի նշութեր, վորոնք անհրաժեշտ են մանկան որգանիղմին և նրա կանոնավոր զարգացմանը: Այս նշութերն են՝ ճարպեր, կենդանական սպիտակուցներ (միս, ձուկ, ձու և այլն), բուսական սպիտակուցներ (հաց, կարտոֆիլ, հատիկներ, լոբի, սիսեռ) և ածխաջրեր (УГЛЕВОДЫ): Վորոշ մթերքներ (սննդանշութեր) անհրաժեշտ են նախադպրոցականին նաև այն պատճառով, վոր իրենց մեջ վիտամիններ են պարունակում. սրանք այնպիսի նշութեր են, վորոնք նպաստում են որգանիղմի աճման և կանոնավոր գործունեացման. վիտամիններով առանձնապես հարուստ են՝ կաթը, կովի չուրը, կաղամբը, գաղաբը, ձկան չուրը:

Նայած չերեխաների տարիքին՝ այս նշութերը պետք է տրվեն ամեն որ, վորոշ նորմալով (տես՝ հավելված «Առողջ չերեխայի որական սնունդը, տախտ. № 3): Մանկհիմնարկի սրվա տեղություն համեմատությունը չերեխաներն որական 2—4 անգամ պետք է սնվին, այն հաշվով՝ վոր ամեն 2—3 ժամից հետո սնունդ տրվի նրանց, վորոշ ընդմիջումներից հետո, սահմանված ժամերին: Միանման և աղքատ սնունդը վնասում է չերեխայի որգանիղմին, այս պատճառով կերակուրը պետք է համեղ լինի, բազմազան մթերքներից պատրաստած, փոփոխվելով թե շարաթվա և թե որվա ընթացքում, իհարկե, հաշվի առնելով նաև շուկայի վիճակը, տարվա չեղանակը և այլն: (Որինակ՝ ամառը բուսեղենն ու կաթնեղենը շատ ոգտակար է, ձմեռն ավելի անհրաժեշտ է չուրը և այլն): Կերակրացանկը կազմելիս (բժշկի հետ) բոլոր այս հանգամանքները պետք է հաշվի առնել:

Մսունդը (ուտելու մոմենտները) մանկավարժական օշխառանքի ելական մասն է կազմում և ոգտադործվելու չե չերեխաների կազմակերպման և նրանց աշխատանքային ու կուլտուր-առողջապահական ունակություններ պատվաստելու նպատակների համար:

Չերեխաները պետք է սովորեն՝ միասին և վորոշ ժամերին ուտել, պահպանել սեղան նստելու ընդհանուր կանոնները, պետք է իմանան իրենց տեղը, հանդիստ նստեն, հարեանին չխանգարեն, բաժիններն ստանալիս հերթի սպասեն և այլն: Մակալն չպետք է որենք գարձնել բացարձակ լուծված պահանջները, սեղանի շուրջը պետք է լինի հանգիստ, բայց ուրախ տրամադրություն, սիրալիրություն, բայց վորոշ դսպվածություն, սեղան պատրաստելը չպիտք է ձգձգել. անհրաժեշտ է լվանալ ձեռներն ուտելուց առաջ և վորողել բերանն՝ ուտելուց հետո: Պետք է զգուշ լինել, չթափթփել սեղանին, շորերին, հացը չփշրտել, ոգտվել անձեռոցիկներից, ձեռներով չուտել և զգալը կանոնավոր դործածել:

Այս բոլորը վորոշ կազմակերպվածություն և պահանջում: Ամեն

մի չերեխտ իր ափսոն ու զդալը պետք է ունենա. տեղը պետք է ազատ լինի, վոր շարժումները չխանգարեն թե իրեն, թե հարևանին: Ամանեղինն ու ճաշի պարագաները (աղաման, սրբիչ, զդալ) պետք է այնպես դասավորված լինեն, վոր չերեխտան հեշտութեամբ ոգտվի և կանոնավոր ուտի: Հացը դրվում է ընդհանուր ամաններում, վորտեղից վերցնում են՝ ինչքան հարկավոր է: Թե տրամադրութեան և թե ակտորժակի վրա ազդում են նաև արտաքին հանգամանքները, — ծաղիկներ, մաքուր սփռոց, դեղեցիկ հարմար ամաններ և այլն:

ՀԻՄՆԱՐԿԻ ՈՐԱԿԱՐԳԸ Բեժիմի կանոնավոր պահպանումը հնարավոր է միայն այն դեպքում, չեք բոլոր մոմենտները նպատակահարմար կերպով են դասավորված որվա ընթացքում: Ուտի և առաջին որվանից պետք է որակարգ սահմանել:

Որակարգը սահմանելիս պետք է աշխատել այնպես անել, վոր չերեխտաների գործունեությունը որվա ընթացքում միակերպ չընթանա, առավոտյան ժամերին պետք է այնպիսի դրադմունքներ մտցնել, վորոնք ավելի թարմութուն ու չեռանդ են պահանջում և ընդհակառակը՝ վերջին ժամերին խուսափել լարվածություն պահանջող դրադմունքներից: Հանգիստ ու նստակյաց դրադմունքներին պետք է հաջորդի շարժուն գործունեությունը և ընդհակառակը որը պետք է այնպես դասավորել, վոր վորոշ ժամեր (ինչքան կարելի չե շատ) բացթյա անցկացնեն, դրադմունքների մի մասը (խաղ, վորոշ աշխատանքներ) ըստ հնարավորութեան դուրսը կազմակերպելով: Բացի այդ, ինչպես ասել ենք, վորոշ ժամանակ հանգստի չե հատկացվելու: Տևական հիմնարկում (6—10 ժամ) որական $1\frac{1}{2}$ —2 ժամ հանգստի (քնի) չե հատկացվում, փոքրերն այդ ժամերին քնում են, իսկ մեծերը (6—7 տ.) լուռ հանգստանում են կամ հանգիստ ու նստակյաց դրադմունքներ են ունենում (պատմել, ընթերցանություն, հանդարտ զրույց և այլն):

Որինակելի որակարգ

Մանկապարտեղ
(6 ժամվա)

Մանկական ոջախ
(10 ժամվա)

ժ. 9—10. Յերեխտաներին քննելը (ОСМОТР). Լվացվել, շփումը. ատամները մաքրելը. զրհստները փոխելը. ցուցակագրումն:	8—9 Նույնը (տես. նախ. ժ. 9—10)
10—11. Նախաճաշ. հավաքելը, կենդանի անկյան խնամք:	9—10 » (» » ժ. 10—11)
11—12. Ութմիկ շարժումներ	10—12 » (» » 11—12)
	12— $1\frac{1}{2}$ (» » 12— 1)
	$1\frac{1}{2}$ — $2\frac{1}{2}$ (» » 1— 2)
	$2\frac{1}{2}$ — $4\frac{1}{2}$ (» » 2— 3)

(10 - 20 րոպե) չերգ, ազատ խաղեր. անհատական և կոլեկտիվ սանդձագ. աշխատանք (ծեփ, նկար, կառուցումն). գրույց, պատմել:

12—1. Բացոթյա զբաղմունք, գրոսանք, չրրեմն և քսկուրսիտաներ:

1—2. Լվացվել, ճաշ, հավաքելը, բերանը վողողելը:

2—3. Հանդիտ, քուն. մեծերի հետ՝ գրույց, ընթերցանութուն և այլն:

3-ին Տուն գնալը:

ԾԱՆՈԹ.—6 Ժամից ափելի պահելու զեպքում չերկարացնել բացոթյա զբաղմունքները, հանգիստը. տուն գնալուց առաջ սահմանել գրոսանք:

4¹/₂—5 բացոթյա զբաղմունքներ, գրոսանք:

5—5¹/₂ Նախընթերք:

5¹/₂ 6 Զրույց, պատմելը, չերաժառության ունկնդրութուն, նկարներ նայելը:

6-ին. Տուն գնալը:

ԾԱՆՈԹ.—10 Ժամից պակաս պահելու զեպքում կրճատել ուրթմիկ շարժումներն ու ստեղծ. աշխատանքները, մասամբ նաև հանգիստը (քունը):

Տվյալ որակարգը ձմեռային սեզոնի համար և ամառը և գարնանը պետք և փոփոխել, զբաղմունքների մեծ մասը բացոթյա տանկով:

Մանկան կյանքը կազմակերպելն ու դասաՄԱՆԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆ ՈՒ ՎՈՐԵԼԸ ԻՐԵՆՑ՝ չերեխաների ակտիվ մասնակցությամբ ու համապատասխան գործունեությունամբ պետք և ընթանա:

Այդ գործունեությունը նպատակահարմար կերպով տանելու համար պետք և հաշվի առնել. ա) մանկան տարիքն ու նրա ֆիզիկական զրութունը, բ) նրա կարողությունները (հոգնածութունը), գ) աշխատանքի պայմանները (ոդը, ջերմութունը, նյութը, գործիքները և այլն):¹

Յերեխաներին մատչելի, հասկանալի ու հաճելի աշխատանքը հնարավոր և դարձնում համախմբել նրանց աշխատանքի շուրջը, հետզհետե կանոնավորել մանկկոլեկտիվի կյանքը, պատվաստել նրանց կազմակերպչական ու աշխատանքային ունակությունները:

Հիմնարկը կազմակերպելու հենց սկզբի մոմենտներից պետք և չերեխաներին մասնակից անել այդ աշխատանքներին. այն աշխատանքները, վոր հետաքրքրական ու մատչելի չեն չերեխաներին, պետք և մեծերն իրենք կատարեն: Շենքը կարգի բերելն ու կահավորելը մեծ

¹ Дедюлина-Успенская — Трудовое воспитание дошкольника-Пинкевич — Педагогика, т. I.

հետաքրքրութիւն կարող և առաջացնել լերեխաների մեջ. գուցէր դասավորելը, դարակներ ու կախարաններ տեղավորելը, անպետք ու բնական նյութերն հավաքելը, տեղավորելը և այլն. ընթացիկ աշխատանքներից լերեխաները կարող են մասնակցել պիտուէքների ու մթերքների գնման, սեղանը փռելուն ու հավաքելուն, փոքրերին ոգնութիւնն ցույց տալուն (լվացվելիս, աշխատանքի ժամանակ) և այլն:

Սկզբում լերեխաները կամավոր կերպով են մասնակցում աշխատանքներին. նրանք միասին են աշխատում՝ առանց պարտականութիւնների բաշխման: Ղեկավարը նրանց հետ և աշխատում, անձնական որինակով լերեխաների մասնակցութիւնն ու կանոնավոր աշխատելը խրախուսելով:

Աշխատանքի ընթացքում, յերբ տեսնում են առաջադրած կոնկրետ անելիքն ու հասկանում են պահանջները, լերեխաները մոռանում են քաշվածութիւնը և մտերմանում են թե զեկավարի և թե իրար հետ, սկսում են գիտակցել ընդհանուր շահերն ու պահանջները: Ղեկավարը նույնպէս իր հերթին ծանոթանում և լերեխաներին, նրանց յուրացրած ունակութիւններին ու հետաքրքրութիւններին:

Աշխատանքային գործունէկութիւնը հետզհետե ավելի նկատելի տեղ և բռնում լերեխաների կյանքում:

Յերեխաների աշխատանքը կարող և կրել հետեյալ բնուէթը՝

1. Անձնակազմ խնամք (իցնեսսուպասպորում).—Փոքրերի խմբակում լերեխան սովորում և առանց ոգնութիւնն ուտել, լվացվել, հագնվել ու հանվել, իրերն ու խաղալիքներն հավաքել և այլն: Այս նուէն աշխատանքները մեծերի խմբակում ավելի լին լայնանում, բարդանում և ավելի ինքնուրուէն են դառնում, որինակ՝ վոչ միայն լվացվել, ալ և լվացվելու պայմաններն ստեղծել (ջուր ածել, խողանակը լվանալ և այլն): Ավելանում են նաև համեմատաբար ավելի չեռանդ պահանջող աշխատանքներն, որինակ՝ անկողինը հավաքելը, զգեստները մաքրելը կոճակներ կարելը, կոշիկը կապելը և այլն:

2. Կոլեկտիվի պահանջից բխող հանրագոտ ւախասանք.—Սրանց շարքին են պատկանում.—սեղանատանն ու խոհանոցում տարվող աշխատանքները, սենյակները կարգի բերելը, գնումներին մասնակցելը, նյութերի և պիտուէքների պահպանութիւնը, նրանց նորոգութիւնը, շէնքի և սենյակի կահավորումը և այլն: Հանրագոտ աշխատանքներից են նաև տոների նախապատրաստութիւնը, կենդանիների ու բուսերի խնամքը. բանջարանոցի և ծաղկոցի աշխատանքները:

3. Յերեխաների ստեղծագործական ւախասանքներ—ծեփ, նկարչութիւն, փայտի մշակում, անպետք նյութերի (бросовый материал)

ողտագործում և այլն: Թե հիմնարկի և թե չուրաքանչուր խմբակի ընթացիկ կյանքը ստեղծագործական աշխատանքի բազմաթիվ մոմենտներ և պարունակում: Յերեխաները կարող են խաղալիքների համար դարակներ, սրբիչների համար կախարաններ ու նշան-նկարներ շինել: փոքրերի խմբակի կամ մսուրի չերեխաների համար խաղալիքներ պատրաստել և այլն, տոներին՝ պլակատներ նկարել, պատի լրագրի համար նկարներ պատրաստել և այլն: Ստեղծագործական աշխատանքները, բացի իրենց հանրօգուտ նշանակությունից, նպաստում են ազատ ինքնագործունեությունն արտահայտելուն և շրջապատից ստացած տպավորությունների ամրացման:

Նկարի, ձեռի, փայտի ու անպետք նյութերի միջոցով չերեխաները բազմազան իրեր են պատրաստում: կռուցումներ, մեքենաներ, ռադիո, ավտո, ողանավ, գործիքներ, պատկերացնում են արդիական կյանքը—պիտներ ու հսկանմաներիկ, միտինգ, թատրոն, կոոպերացիա, կենցաղային խաղեր և այլն:

Նյութերն ու գործիքները պետք է քանակով բավարար լինեն. նյութը պետք է բազմազան լինի՝ Հիմնական նյութերն ու պիտույքներն են, հասարակ ու գունավոր մատիտներ, ներկեր (սոսնձի), սպիտակ ու գունավոր թուղթ, մկրտա՝ բութ ծալերով, կռուցողական, բնական և անպետք նյութ, կավ (կավը պետք է առաջուց պատրաստել՝ մաքրել, շագխել): Փայտի մշակման համար անհրաժեշտ են՝ մուրճեր, մեխեր, սղոցներ, դանակ և այլն— այս բոլորը հարմար չափերի ու ծանրության:

Նյութերը, գործիքներն ու չերեխաների աշխատանքները պահելու համար պետք է տեղ լինի դարսելու—պահարաններում, դարակներին, պատերին և այլն: Անպետք նյութերի համար պետք է առանձին արկղ կամ դամբուղ ունենալ:

Հանրօգուտ աշխատանքները ղլխավորապես մեծերի հետ և տարվում: Փոքրերն իրենց խմբակի սահմանում են կատարում այդ աշխատանքները, այն ել սեղմած ծավալով (չերթապահություն, բույսը ջրել և այլն):

Թե մեծերի և թե փոքրերի նկատմամբ աշխատանքի ծանրաբեռնում չպետք է տեղի ունենա. պետք է զուշ լինել և հետևել, վոր աշխատանքը ծանր չլինի, համապատասխանի չերեխաների ուժերին, չերկարատև չլինի (20—30 րոպե) և առողջապահական պայմաններում ընթանա (թաց շորով սրբել հատակը, սենյակն ողափոխել և այլն):

Աշխատանքը պետք է սկսել այն ժամանակ, չերը չերեխաներն աշխուժ են, կուշտ ու չեն հոգնել ուրիշ զբաղմունքներից: Աշխատանքի մոմենտներին պետք է փոխարինի խաղը կամ հանգիստը:

Աշխատանքի կանոնավոր կազմակերպման համար համապատասխան կահավորութիւնն ու անհրաժեշտ գործիքներն, ինչպէս ասվեց, պետք է համապատասխանեն չերեխաների կարողութեան, բայց, միևնույն ժամանակ խաղալիքների բնույթ չկրեն, այլ հնարավորութիւն տան «իրօք աշխատել» և աշխատող չերեխային վորոշ հետևանքի հասցնել: Անհրաժեշտ և վորոշ կահավորութիւն և գույք տրամադրել տնտեսական ու բնութեան մեջ տարվող աշխատանքներին.— խողանակ, ջնջոցներ, դուլլ, թաս, աթոռ, գոգնոցներ, բահ, փոցիկ, ավել, պատարակ, ծաղկամաններ, արկղներ և այլն: Այս բոլորը կարելի չէ հեշտութեամբ ձեռք բերել, չեթե վորոշ մասը իրենց՝ չերեխաների ու պիտոներենրի ոգնութեամբ պատրաստվի, վորոշ իրեր ծնողները տրամադրեն ու շինեն կամ հասարակական կազմակերպութիւնները՝ նվիրեն: Բոլոր իրերն ու գործիքները պետք է իրենց վորոշ տեղն ունենան և աշխատանքներից հետո հավաքվին ու խնամքով պահպանվին:

Աշխատանքի կազմակերպումն ու ձեւերը սերտ կապ ունեն առհասարակ մանկական կոլեկտիվի կազմակերպման հետ (հերթապահութիւն, աշխատանքի խմբակներ, հանձնաժողովներ և այլն): Այստեղ անհրաժեշտ է շեշտել այն, վոր բացի խմբակային աշխատանքներից, վորոշ դեպքերում ընդհանուր աշխատանքներ են կազմակերպվում նույն տարիքի չերեխաների համար, որինակ—պահարանների հավաքելը, պարտեզն ու բակը մաքրելը և այլն: Այս բոլորը կատարվում է զեկավարի մասակցութեամբ, վորը վորոշ նպատակներ գնելով (փորձի ընդլայնում, այս կամ այն ունակութիւնների պատվաստում և այլն), հետևում է, թե ինչ չափով հասնում է այդ նպատակին և հոգնածութիւնն չի նկատվում արդոք չերեխաների մեջ:

Պաղը նույնքան կարևոր տեղ է բռնում խԱՂԸ ՆԱԽԱԳՊՐՈՅԱԿԱՆԻ ԿԿԱՆՁՈՒՄ, ինչքան և աշխատանքը¹: Պաղի միջոցով չերեխաները դրսեվորում են իրենց տպավորութիւնները, համախմբվում են ընդհանուր նշուժի ու հետաքրքրութեան շուրջը, կազմակերպում են իրենց աշխատանքը: Այս բոլորի շնորհիվ խաղն ոգտագործվում է մանկան փորձն ամբացնելու, նրան կազմակերպչական, կոլեկտիվ, աշխատանքային ունակութիւններ պատվաստելու նպատակով:

¹ Моложавый—Игра и труд.
 Аркин—Дошк. возраст, ч. I.
 Чулицкая—Сборник дошк. игр.

նազն իր մեջ պարունակում և շրջապատից ստացած տպավորութիւնները: Ուստի և ղեկավարը սխտեմատիկորեն ղիտելու չե լերեխաների խաղը, հաշի չե սունելու թե գրսից և թե մանկկոլեկտիվի կլանքից վերցրած տպավորութիւնները և ցանկալի ընթացք և տալու խաղողին՝ առաջնորդվելով շրջապատի ու արդիտեկանութեան և խաղի նշութերի նպատակահարմար ընտրութեամբ: Հիմնարկի որակարդում խաղերին պետք և համապատասխան տեղ արվի:

Սաղի նշութերից գերազանցելի չեն անպիսները, վորոնք նպատում են լերեխաների ստեղծագործութեան արտահայտման և նրանց գործունեութեան բազմազանութեան: Այդպիսի նշութերից են՝ դանազան չափերի ու ձևերի կառուցողական նշութերը (խորանարդ, գլան, չեռանկլունի, ձող և այլն), շինարարական նշութերը (տուփեր, տախտակ, փայտի կտորտանք, ֆաներա և այլն), անպետք նշութերից՝ տուփեր, կոճ, թոկ, լերկաթալար, շորի կտորներ և այլն, ավազն ու ավազանոթները, բահերը, դուլիերը, ինչպես նաև բնական նշութերն (խիլեր, շագանակ, լեղիզն, քարեր, սերմեր և այլն) ու արդիականութիւնն արտահայտող նշութերը (թմբուկ, գրողակ, թղթի «կոմունարկաներ» և այլն) նուչնպես հնարավորութիւններ են տալիս ստեղծագործական աշխատանքի: Շարժական խաղերի համար կարելի չե ոգտագործել գնդակ, թոկ, սանձ, թիակներ, սալլակներ և այլն:

Ինչպես և աշխատանքի պարագաները, այստեղ և շատ բան կարելի չե ձեռք բերել առանց մեծ ծախսերի: Զրոսանքների, ինչպես և եքսկուրսիաների ժամանակ ղեպի բնութիւն, արհեստանոց, կոտակրատիվ և այլն—կարելի չե բազմազան նշութեր ձեռք բերել, վորոնք կնպաստեն լերեխալի ստեղծագործութեան ու փորձի ամրացման: Կառուցողական նշութը հաճախ կարելի չե սեփական միջոցներով պատրաստել: Նշութերը գործադրելիս լերեխաները պետք վորոշ կարգ-կանոնի ընտելանան.—ամեն բան իր տեղում պահեն, խնամքով ու մաքուր: Յերբեմն պետք և խտտահանել այդ նշութերը, թափ տալ, վորոշն սրբել և՛ վորը հնարավոր և, սապնաջրով լվանալ: Յերեխաների հետ միասին պետք և նշութերը դարսելու, մաքրելու և պահպանելու կարգը սահմանել:

Բացի այս խաղերից («աղատ խաղեր»), վորոնց միջոցով լերեխաները կազմակերպվում են և իրենց տպավորութիւններն արտահայտում, նախազարգացական հիմնարկներում գործադրվում են նաև «կազմակերպված խաղեր» (վորոշ կանոններով): Այդ խաղերը ղեկավարն և առաջադրում, և նրանց նպատակն և—լերեխաների ֆիզիկական աճումը, արտաքին զգալարանների զարգացումը (լսողութեան,

տեսողութեան, շոշափելիքի), կանոնավոր շարժումներն ու ճարպիկութիւնը (վազք, ցատկում, քայլել, գնդակը նետել և այլն): Կազմակերպված խաղերն ոգտադործվում են նաև չերեխաներին վորոշ կանոնների ընտելացնելու նպատակով,— իր հերթին սպասելու, կոլեկտիվ խաղի ունակութիւններ ձեռք բերելու և այլն: Կազմակերպված խաղերը պետք է կրկնել չերեքի, սակայն այնպես, վոր չերեխաները չհոգնեն ու չձանձրանան:

Սաղի ուղղութիւնն ու բովանդակութիւնը պայմանավորվում է վոր միայն շրջապատող պարագաներով, այլ և ղեկավարի տակտով ու վերաբերմունքով: Պետք է զգուշ լինել և չճնշել չերեխայի ակտիվութիւնը: Սակայն այն դեպքում, չերք խաղն արտահայտում է բացասական բնույթ (մահապատիժ, ծիսակատարութիւն, խրախճանք) կամ աղքատ ու միապաղաղ ընթացք է ստանում, ղեկավարն իր հմուտ միջամտութեամբ ուղղութիւն է տալիս, նոր թափ է հաղորդում խաղին՝ ծեսը վերածելով տոնի, խրախճանքը՝ միտինգի և այլն: Շատ հաճախ այսպիսի միջամտութեան կարիք են զգում նորեկները, վորոնք իրար հետ խաղալ չգիտեն. չերեքն էլ ղեկավարը խաղի վրա ազդում է համապատասխան նշույթեր մտցնելով:

Մեծերի հետ կարելի է տանել հետ չալ կազմակերպված խաղերը. գնդակ, կեզի, սերսո, գայլն ու հովիվները, գուլներ, թխսամբը, պիտներական խաղեր և այլն: Փոքրերի խաղերը պետք է ավելի պարզ լինեն և այնպես, վոր խմբով խաղան, որինակ— իրար բռնելը, պահմտոցիկ, պահբռնոցիկ, գնդակով պարզ խաղեր, գնացք և այլն:

Հանգիստ նստակցաց խաղերից (փոքրերի) կարելի է գործադրել մողախկան, ներդրվող խաղալիքները (вкладные игрушки), բուրգ, ավազանոթներ և այլն:

ԿԱՊ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՅԵՎ ԵՐՋԱՊԱՏԻ ՇԵՏ

Նախադպրոցական չերեխան աճում է և զարգանում այն ազգացութիւնների տակ, վոր ստանում է միջավայրից՝ ընտանիքից, փողոցից, աշխատանքային շրջապատից, հասարակական վայրերից (թատրոն, կինո, շուկա) և այլն. այս միջավայրից չերեխան ստանում է թե զրական և թե բացասական տպավորութիւններ, վոր զգալի կերպով ազդում է նրա վարքին ու վարմունքներին: Դեկավարն ու դաստիարակը (ինչպես և ծնողներն ու մեծերը) չեն կարող անտարբեր լինել ղնպի այդ շրջապատող բազմազան ազդակները. պետք է այնպիս կազմակերպել մանկան միջավայրը, վոր նա (միջավայրը) չերեխային հեղափո-

խական արդիականութիւնն ազգականը հազորդի և այդ ուղղութիւնը կազմակերպի չերեխայի վարքը¹։

Իսկ միջավայրին քննադատարար վերաբերվելու համար պետք է ծանոթանալ նրան, վերլուծել այն, հայտնաբերել թե՛ զրական և թե՛ քաղաքական գործո՞նները։ Մանկավարժական աշխատանքը կառուցելիս պետք է ոգտագործել այն մոմէնտները, վորոնք ամենից շատ են նպաստում հիմնարկի առաջ գրված խնդիրների իրագործման՝ չերեխաների մէջ հեղափոխական-աշխատանքային ուղղութիւնն մշակելու, նրանց փորձը հարստացնելու և անհրաժեշտ ունակութիւններ ու հմտութիւններ պատվաստելու նկատմամբ։

Շրջապատի զրական ֆակտորների կանոնավոր ուղտադործումն ու մանկան գործունէնութիւնն համապատասխան կազմակերպումը հնարավորութիւնն են տալիս հետզհետե չեղոքացնել այն քաղաքական ազդեցութիւնները, վոր գոյութիւնն ունեն ավլլալ միջավայրում։

Այժմ տեսնենք, թե՛ շրջապատի ինչպիսի չերեուլթներն ու մոմէնտները կարող է ողտադործել մանկհիմնարկն իր աշխատանքների ընթացքում։

ա) Կապ արտադրական-աւլասանլային յել հասարակական կյանքի հետ.— Այստեղ ամենից առաջ պետք է ինկատի ունենալ բնակչութիւնն տրտադրական-աշխատանքային և կուլտուր-կենցաղային կյանքը։ Ի հարկե, այս պայմանները կարող են տարբեր լինել քաղաքում և գյուղում, բանվորական և մանր-տնտեսութիւնն միջավայրում։ Ահա այս տարբեր միջավայրն ուսումնասիրելիս ու վերլուծելիս պետք է հաշվի առնել՝ վոր չերեուլթներն են մատչելի ու ցանկալի չերեխաների համար, ինչ չափով է հնարավոր այդ տպավորութիւնները չուրացնել և կապել չերեխաների խաղի ու աշխատանքների հետ։

Յերեխաներին շրջապատի հետ կապելու և արդիականութիւնն մոտեցնելու համար անհրաժեշտ է ծանոթանալ մեծերի աշխատանքներին— քաղաքում՝ արդուներեական, բաշխման ու սպառողական հիմնարկներում, գյուղում՝ գյուղատնտեսական աշխատանքներին, չերկուստեք— կուլտ-կրթական, տնայնագործական, արհեստանոցային աշխատանքներին, խորհրդային հիմնարկներում և այլն։ Ամենուրեք պետք է հաշվի առնել, թե՛ ինչ չափով մատչելի չեն այս չերեուլթները, ինչպիսի զրական աղբականը են պարունակում. չպետք է աչքաթող անել այս այցելութիւններին ու դիտողութիւններին ընթացքում նաև առող-

¹ Прумицкая.— Дошкольное воспитание и современность.

Новые пути подготовки дошк. работников, ст. Суровцевой.

Չապահանական պայմանները, չերեխաների հողնածութիան աստիճանը-
որինակ, վոչ մի կարիք չկա չերեխաներին սպանդանոց կամ խոնավ ու
թաց լվացքատուն տանել, քաշ տալ նրանց հեռավոր եքսկուրսիայի
և հողեցնել: Այլևի նպատակահարմար են այն եքսկուրսիաներն ու
կապը, վոր բղխում են հիմնարկի կլանքից ու կարիքներից. որինակ,
կոտակերատիվի աչցելութունը կապել միերքների գնման հետ, պիտնե-
րտունը—առաջիկա տոների կամ ռեժիմի փոփոխութիան (որգանիզմի
ամրացում) հետ և այլն:

Բոլոր դեպքերում ել կապն ու աչցելութունները չպետք և հե-
տադրոման նպատակներ հետապնդեն, այլ չերեխաներին՝ աշխատա-
վորների կլանքին ու նխտուկացին հաղորդակից անելու նկատառում-
ներ ունենան:

Շատ ցանկալի չե կապ հաստատել նաև մանկհիմնարկների հետ—
մտնկապարտեզի, մսուրի, դպրոցի, վորի ընթացքում և հանրոգուտ
աշխատանքի բազմաթիվ առիթների կարող են լինել:

բ) Հասարակական-բաղաձայն ձևեր¹.—Այս տոներից պետք և
ընտրել այնպիսիները, վոր հարուստ ու գունեղ տպավորութուններ
են առաջացնում, մատչելի ու հարադատ են չերեխաներին և խրախու-
սում են նրանց ակտիվութունը, բարձրացնում նրանց արամադրու-
թունը: Աննպատակ և նախադպրոցականին զբաղեցնել հեռավոր անց-
յալի մտապատկերներով—Փարիզյան կոմունայի, 1905 թ. և այլն, կամ
Լենինյան որերին սգի ու թախծի բնույթ տալ: Յերեխաներին սիրելի
ու մատչելի կարող են լինել Հոկտեմբերյան որերը, Մալխի 1-ը, Մար-
տի 8-ը, Լենինյան որերը և տեղական լայն բնույթ ունեցող որերը
(Հայաստանի խորհրդայնացումը մեզ մոտ, 26 կոմունարների որը և
այլն):

Տոնի ստիմուլը պետք վերցնել շրջապատից, նկատելի նախա-
պատրաստութուններից, առանց հատուկ զեկուցումների, ծրագրային
համարների մանրամասն մշակման և այլն. բոլոր դեպքերում ել տոնի
ըմբռնումը պետք և կոնկրետացնել և կապել չերեխաների խաղի ու
աշխատանքի հետ. այսպես, Մալխի 1-ին կարելի չե աշխատանքային
խմբակները խաղ², իսկ Հոկտեմբերին՝ միջազգային զգեստավորում ու
խաղ կազմակերպել և այլն: Այնուհետև կարելի չե հետաքրքիր դեպքեր
պատմել, համապատասխան ամսագրեր ու նկարներ դիտել և այլն,
դարձյալ առանց պատմական մանրակրկիտ ուսումնասիրութիան: Տոնի

¹ Шерр.—Детские праздники.

III с'езд. по дошк. восп.—Доклад Рошалея.

² М. Маркович.—1-ое мая в дошк. учреждениях.

էլական կողմը չերեխաների համար այն կլինի, վորպեսզի նրանք վառ հուշեր ապրեն և մատչելի չափով մասնակցեն, առանց ձգձգելու և հոգնեցնելու: Շքերթներին մասնակցելն (մոտ տեղ, կարճ ժամանակով) ու տոնակատարումն հիմնարկի ներսում ցանկալի չե նուզն որն անց-կացնել, վորպեսզի չծանրաբեռնել չերեխաներին ու չձանձրացնել:

4) Կապ պիտոններին հետ ¹. — Կապը պիտոններին հետ հեղափոխա-կան արդիականութեան տեսակետից կարևոր գործոն և հանդիսանում: Իրենց կազմակերպվածութեամբ, հեղափոխական ուղղութեամբ և աշ-խատանքային գործունեությունով պիտոնները հանդիսանում են վառ ու մատչելի միջավայր նախադպրոցականի համար: «Պիտոնները նախա-դպրոցականի աժազ ընկերն ու բարեկամն և», — այս լողունդի ասել պետք և պահպանել պիտոնների ու նախադպրոցականի կապը: Վորպեսզի պիտոնների տղզեցությունն ամրանա և իր հետևանքներն արտահայտի, կապը մանկհիմնարկի հետ չպետք և պատահական լինի և խանգարի հիմնարկի պլանային աշխատանքները, այլ չերկուստեք պետք և ծրա-գրվեն այդ աշխատանքները և կազմակերպված ու սխտեմտախիչ ընուլթ կրեն:

Պիտոն-կազմակերպության բյուրոն պետք և այնպես բաշխի աշ-խատանքները, վորպեսզի չուրաքանչյուր նախադպրոցական հիմնարկի ամբողջի մի պիտոն-ջոկատ, ըստ հնարավորութեան՝ արտադրութեան կից կուլեկտիվներին: Ջոկատը կամ ողակը նախադպրոցական հիմնար-կին վորոշ ժամանակով (2—3 ամիս) և ամբողջում և այդ ժամանա-կաշրջանի համար ջոկատի խորհուրդն ու մանկհիմնարկի կուլեկտիվը փոխադարձաբար համաձայնեցնում են աշխատանքների ծրագիրը, Հիմ-նարկում աշխատանքները տանելու համար նշանակվում են ավելի մեծ տարիքի պիտոնները, վորոնք մացնակցում են՝ ըստ հնարավորութեան՝ հիմնարկի բոլոր աշխատանքներին, — ոգնությունն ընկալանոցը մշա-կելու, սեղաններն ու աթոռակները շինելու և վերանորոգելու աշխա-տանքներում, մասնակցություն հերթապահների և հանձնաժողովների աշխատանքներին, ընդհանուր (մանկական) ժողովներում, տոների նա-խապատրաստութեան ժամանակ, չերեխաների առողջացման գործում (ողի, արևի, ջրի ոգտագործումը), և քսկուրսիաներին և այլն: Յոթ տարեկաններին պիտոնները նախապատրաստում են հոկտեմբերիկների շարքերն անցկացնելու, սակայն առանց ընդհանուր աշխատանքները խանգարելու և առանց շարունացնելու ըստ տարիքի հոկտեմբերիկներ ընտրելը: Պետք և զգուշ լինել, վորպեսզի այդպիսի թեկնածուները չկարվեն իրենց կուլեկտիվից և արտոնությունների տեղ չհամարեն իրենց:

¹ Методич. письмо № 2.

Պիրոններն են ակտիվ կերպով մասնակցում են հիմնարկի հասարակական աշխատանքներին (բնակչության և ծնողների հետ):

Զպեսք և աչքաթող անել լերեխանների տարիքային առանձնահատկություններն ու ըստ այնմ զանազան զբաղմունքներ տալ, սակայն առանց ծանրաբեռնելու:

Բնութչան լերեուլթների ճիշտ ըմբռնումը լերեխայի մեջ մշակում և մատերիալիստական մտտեցումն դեպի շրջապատն ու կյանքը, սնահավատություններից ու նախապաշարմունքներից զերծ և պահում լերեխային և լայն հնարավորություններ և ստեղծում կոլեկտիվ աշխատանքի համար: Այս նպատակով լերեխաններին հաճախ եքսկուրսիա լին տանում կամ բնութչան հարմար միջավայր են կաղմակերպում մանկհիմնարկում (պարտեզ, ծաղկոց, կենդանի անկյուն և այլն): Այսպիսով շրջապատող բնութչունը դառնում և սեփականության դաստիարակության գործոն, աշխատանքային գործունեություն հարուստ նյութ և տալիս և, վերջապես, նպաստում և լերեխանների առողջացման: Բնութչունը լերեխաններին շատ մատչելի ու հասկանալի, պարզ ու կոնկրետ նյութեր և տալիս, վորոնց հիման վրա լերեխան սովորում և առանձին լերեուլթների մեջ գոյություն ունեցող կապը պարզել ու ըմբռնել: Բնութչան մեջ աշխատելով, լերեխան սովորում և հաղթահարել վորոշ դժվարություններ, իր և մեծերի՝ բնութչան մեջ տարվող աշխատանքների շնորհիվ նա սովորում և ճանաչել բնութչան ուժերը և ծառայեցնել այն մարդու կարիքներին¹:

Բնութչան հետ ծանոթությունն սկսվում և մտախիղց, պարզից, վոր կապ ունի թե լերեխանների և թե մեծերի առորչա կյանքի ու աշխատանքային գործունեություն հետ: Յերեխանների մասնակցությունը կերակուր պատրաստելում, սանիտարիայի և առողջապահության կանոններին ծանոթանալը, բնութչան մեջ տեղի ունեցող փոփոխությունները դիտելը, հողամասի վրա տարվող աշխատանքները (հարթելը, մշակելը, ձյունը մաքրելը և այլն), այգու, բանջարանոցի, ծաղկոցի աշխատանքները, — այս բոլոր մոմենտներն ոգտագործվում են բնութչան լերեուլթները դիտելու և ուսումնասիրելու համար:

Եքսկուրսիաներն ու զբոսանքները նպատակ են դնում (բացի լերեխաններին հաճույք պատճառելուց և ողն ու արևը ոգտագործելուց) հարստացնել լերեխանների փորձը, նոր տպավորություններ հաղորդել նրանց: Մեծերի աշխատանքը դիտելիս ցանկալի չե տարբեր մոմենտներում կատարել եքսկուրսիաները, վորպեսզի հնարավոր լինի դիտել

¹ Методич. письмо № 7 по дошк. воспитанию.

վոչ միայն աշխատանքը, այլև նրա հետևանքները: Այստեղ պետք է ոգտադործել նաև համեմատութիւնն ու հակադրութիւնը, որինակ՝ անհատական ու հոլեկտիվ աշխատանքը և աշխատանքի կազմակերպման տարբեր ձևերը (հոգի մշակումն պարզ գործիքներով ու մեքենաներով): Այսպիսով չերեխան պարզապէս կհամոզվի այն բանում, թե ինչպէս մարդն ազդում է բնութիւյան վրա և փոփոխում է այն իր կարիքների համեմատ: Իրենց բանջարանոցում աշխատանքներ տանելիս, չերեխաներն այցելում են մեծերին, դիտում նրանց աշխատանքը (բանջարանոցում), այդ աշխատանքների կանոնաւոր ընթացքն ու կոլեկտիվ բնույթը և այս բոլորն ընդորինակում են մատչելի ձևերով:

Բնութիւյան մեջ աշխատելիս պետք է խրախուսել չերեխաների ինքնուրուշնութիւնն ու գիտողականութիւնը, — աշխատել, աչսպիս կոչվող, հետադոտական մեթոդներով, չերբ չերեխան պատրաստի տեղեկութիւնների փոխարեն, իր գիտողութիւններով ու փորձերից վորոշ չնգրակացութիւնն և դախտ: Այս բանը մեծ չափով հնարաւոր է բանջարանոցում, այդում ու ծաղկոցում աշխատելիս:

Բնութիւյան չերեուլթները տեականորեն (ամբողջ տարին) ու խորացրած դիտելու համար մեծ հնարաւորութիւններն է տալիս բնուրյան անկյան կազմակերպելը հիմնարկում: Շիշտ է, բնութիւյան անկունում կենտրոնանում են նուշն շրջապատից վերցրած բույսերն՝ ու կենդանիները, սակայն այդ բոլորն անհնար է դիտել դուրսը, բնական պայմաններում, որինակ — ձկները, խիտնջները, գորսը, ճագարն ու սպիտակ մկները, բույսերը և այլն. մինչդեռ այս բոլորը բնութիւյան անկունում դանվում են ձեռքի տակ — արկղներում, շշերում, վանդակներում, ծաղկամաններում և այլն: Այստեղ չերեխաները հնարաւորութիւն ունեն դիտել բույսի ու կենդանու զարգացումն ու ձեակիտութիւնը, բնորոշ հատկութիւնները, կարող են վորոշ փորձեր կատարել (արեի տակ և ստվերում գտնվող բույսերի աճելը, լավ ու վատ խնամքի հետևանքները, տարբեր կերակրի ազդեցութիւնը) և այլն:

Բնութիւյան անկունները կազմակերպում են տատիճանաբար, ոգտովելով իրենց ձեռնարկութիւններից (ցանել, տնկել) և հքակուրսիաներին հավաքած նմուշներից, իհարկէ, բոլոր դեպքերում էլ չերեխաների ախտիվ մասնակցութիւյամբ:

Բնութիւյան չերեուլթների հետ կապված տոներն առիթ են տալիս ցալտուն կերպով դրսևորելու բնութիւյան մեջ տարվող աշխատանքները, հաճախ սկզբնական կամ ավարտական մոմենտներ են դառնում այդ աշխատանքների համար: Բնութիւյան տոները կարող են կապվել կամ հիմնարկի գործունելութիւյան կամ հասարակական ընդհանուր տոներէ:

հետ, որինակ—բանջարանոցի բերքի հավաքելը, այգեկուլթ, ձմեռվա տոն, գարնանամուտ, բերքի տոն, ծառատունկ և այլն: Բնության ավանդական տոները պետք է այս գունավորումով տալ:

Բնության մեջ տարվող աշխատանքների ծավալն ու ըրվանդակութունը տարբեր և լինելու տարբեր խմբակներում, տարբեր տարիքի չեքեխաների համար, Փոքրերի հետ աշխատելիս զբվում են զգալարանների դարգացման (գուններ, ձևեր, ծավալ, ծանրութուն և այլն) և շրջապատի որինտիրովկալի խնդիրներ, մինչդեռ մեծերի հետ տարվող աշխատանքը հիմնվում և մեծ մասամբ նրանց աշխատանքալին գործունեություն վրա:

**ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱ-
ԿՈՒՅՅՈՒՆ**

Նախազարոցականի ֆիզիկական դաստիակութունը պետք է ընդգրկի նրա կյանքի և գործունեության ըրոք մոմենտները: «24 ժամ

ֆիզդաստիարակություն» — այս լողունգն ամենից շատ վերաբերելու չե մինչդպրոցական չեքեխալին: Ֆիզդաստիարակության այսպիսի պահանջը ըրխում և նախազարոցականի որպանիզմի անատոմիական-բնախոսական առանձնատկություններից (ըլուրափոփոխություն, ուժեղ աճում և այլն) և սոցիալական միջավայրի պայմաններից: Առանձին ուշադրություն պետք է դարձնել չեքեխալի ներվալին սխտեմի անկալունություն, հոգնածություն և շարժումների անհրաժեշտություն վրա: Այս առանձնատկությունները հաշվի առնելով, պետք է կազմակերպել մանկան գործունեությունը. խաղը, մտավոր աշխատանքը, շարժողությունը, սնունդը, քունը և ուժիմի ըրոք մոմենտները:

Նյարդալին — ուղեղալին գործունեությունն այն դեպքում միալին նորմալ ընթացք կունենա, չեթե չեքեխալի միջավայրը մանկավարժորեն կկազմակերպվի և կվերացվեն տատանումներ ու ցնցումներ առաջացնող ըրոք պայմանները (ճնշող չեքեխալներ, քաղց, վախ և այլն):

Առաջնակարգ տեղ և գրավելու չեքեխալի սնունդը. տնից քաղցած գալը, ճաշն ու ընթրիքը, տաք նախաճաշն ընտանիքում, — այս ըրոք պայմանները պետք է հաշվի առնել և ձգտել բարելավելու թե տանը և թե մանկհիմնարկում:

Նախազարոցականի հագուստը պետք է ըստ ամենալինի հարմար ու համապատասխան լինի թե նյութի (կտորի) և թե ձևի տեսակետից. ցուրտ չեղանակներին հագուստը պետք է պահպանի մարմնի ջերմությունը, մինչդեռ ամառը նա, ընդհակառակը, պաշտպանելու չե որգանիզմը չափազանց այրող ճառագալթներից: Հագուստը պետք է այնպես կարել, վոր ողի շիման հնարավորություն տա մարմնին, չճնշի շնչառությունը, մարսողությունը, արլան շրջանառությունը և չխանգարի շարժում-

ները: Ամառը պետք է զգեստը թեթև լինի (տրուսիկ) և չժածկի վրիզը, կուրծքը, ուսերը, թևերը, վոտները. արևի, ջրի և ոգի ոգտագործումը ամառը պետք է մաքսիմումի հասցնել (արևի, ջրի վաննաները՝ բժշկի խորհրդով):

Մեծ նշանակություն ունի բնակարանի և անկողնի առողջապահական վիճակը: Յեթե հնարավոր չէ (մեր կենցաղային բնակարանային պայմաններում) չերեխային բավարարել ոգի անհրաժեշտ նորմայով— պետք է բնակարանը (ննջարան, սեղանատուն) մաքուր պահել, հաճախ ախտահանել և ոգափոխել, լավ չեղանակներին չերեխային բաց ողում թողնել, անպայման առանձին անկողին տրամադրել նրան և հետևել անկողնի մաքրության: Մարմնի և հազուստի մաքրությունը պետք է խիստ կերպով հետապնդել (հաճախ լողացնել, սպիտակեղենը փոխել, զգեստը լվանալ, գլուխը խուզել, վոտները, թևերը, վրիզն ամեն օր լվանալ, չեղունդներն ու ակունջները մաքուր պահել, թաշկիրնակն ու առանձին չերեսսրբիչն անհրաժեշտություն դարձնել և այլն):

Ֆիզդաստիարակությունը տանն ու հիմնարկում պետք է համաձուլվի, այլապես մեկի արածը մյուսը կքանդի և առողջապահական-կուլտուրական ունակությունները չեն ամրանա չերեխայի մեջ: Ֆիզդաստիարակության կանոններից մեկն է նաև Իրակարգի (ոեժիմի) սահմանումը թե տանը և թե հիմնարկում. սննդի և քնի ժամանակը, աշխատանքի ու հանդստի հանրոգականությունը, չերեխայի ծանրաբեռնումը և աշխատանքի չափավորումը՝ ըստ տարիքի, որդանիզմի առողջական վիճակի ու աշխատանքի պայմանների (պիտուլքների ու խաղալիքների վորակը, սենյակի կամ բակի մաքրությունը, չորությունը, լույսը և այլն):

Ինչպես ասվեց, Ֆիզդաստիարակությունը չպետք է առանձին սխտեմի վերածվի՝ վորոշ մոմենտների շուրջը, այլ պետք է թափանցի չերեխայի ամեն մի քայլը, գործունեություն չուրաքանչյուր ձև. այս տարրերից վորն էլ վոր վերցնենք՝ խաղ, եքսկուրսիա, չերգ, ընթերցանություն, սնունդ, հանգիստ և այլն,—բոլոր դեպքերում էլ մանկան գործունեությունը պետք է ընթանա մանկավարժական-առողջապահական պայմաններում:

Անս թե ինչու առանձնապես անհրաժեշտ է բժշկի մասնակցությունը հիմնարկի մանկավարժական-հասարակական աշխատանքներում, թե չերեխաների, թե ընտանիքի (բնակչության) և թե ղեկավարներին հետ:

¹ Ч у л и ц к а я.—Основные задачи физич. культуры дошкольника. Методич. письмо № 6.

ԿԵՆԴԱՆԻ ԽՈՍՔՆ ՈՒ ԳԻՐ-
ՔԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԻՄ-
ՆԱՐԿՈՒՄ

Կենդանի խոսքը (զրույց, պատմվածք) ճշ-
տում, սխտեմի չի չենթարկում և ամրացնում և
այն գաղափարներն ու մտապատկերները, վոր
ձեռք և բերում չերեխան շրջապատից՝ իր ազ-
տիվ գործունեությունում: Չրույցի ու խոսակցության միջոցով լայնա-
նում ու հարստանում և մանկան փորձը. նյութի նպատակահարմար
ընտրությունում հնարավոր և չերեխայի մեջ դաստիարակել, հեղափոխա-
կան-աշխատանքային ուղղություն, շրջապատի և երկրպագուների
ընդհանուր ապրումներ, կոլեկտիվ գործունեություն
ձգտումները խրախուսել: Կենդանի խոսքը գործադրելիս մեծ տեղ պետք
և տալ չերեխայի լեզվի վարդացման՝ թե բռնորի հարստացման, թե
ճիշտ արտասանություն և թե իր միտքը բառերով ու կարճ պատմված-
քով արտահայտելու կարողություններին:

Կենդանի խոսքի նյութը պետք և վերցնել շրջապատից, չերեխա-
յին հետաքրքրող վառ ու գունեղ մոմենտներից, նրա պահանջներն ու
խնդիրները բավարարող չերեխայիներից. վերացական ու անծանոթ
նյութը չի գուցարգրվի չերեխայի փորձին, չի առաջացնի կոնկրետ մտա-
պատկերներ, չի հրահրի նրա ստեղծագործական նախաձեռնությունը.
ընդհակառակը, վոչ-ոքալ, ֆանտաստիկ նյութը սխալ պատկերացում-
ներ կառավարի, կկտրի չերեխային և եւ իրականությունից, կսնի
նրա մեջ հիվանդադին ֆանտաստիկա, կազդի նրա աշխարհայացքի ու
տրամադրությունների վրա՝ վախ, ցնորք, միտքիցիզմ, կրոնական
տրամադրություններ առաջացնելով:

Փոքրերի հետ կենդանի խոսքը տարվում և պարզ, առույթ զրույց-
ների միջոցով կամ համառոտ պատմվածքներով՝ չերեխաներին ծանոթ
չերեխայիների կամ շրջապատից վերցրած առարկաների մասին: Իրրև
պիտուկը կամ ոժանդակ միջոց—այստեղ կարելի չի գործածել նկար-
գրքուկները՝ չերեխաներին ծանոթ բովանդակությունում, չեթե նկար-
ները գեղարվեստական արժեքից գուրկ չեն:

Բարձր խմբակում (5-7 տ.) մեծ տեղ և տրվում զրույցին ու
պատմվածքին: Չրույցը կարող և լինել եքսկուրսիայից առաջ, նպա-
տակը պարզելիս, եքսկուրսիայից հետո—ստացած տպավորություննե-
րը մշակելու և ամփոփելու համար. զրույցի հարուստ նյութ են տալիս
հիմնարկի ընթացիկ աշխատանքները, և թիմի մոմենտները, հասարա-
կական տոները և այլն:

Պատմելու արվեստն ունի իր պահանջները՝ նախ արտաքին ձևը.—
գեղարվեստական ու պատկերավոր խոսքն և, վոր վառ ու ուժեղ կեր-
պով կամրացնի չերեխայի փորձը, կլայնացնի աշխարհայացքը, կհրա-

հրի ստեղծագործութիւնը: Ապա—պատմվածքի նյութը, վոր ինչպիսա-
ասվեց, պետք և համապատասխանի հեղափոխական արդիականութեան
պահանջներին, մանկան հետաքրքրութիւններին ու ըմբռնման կա-
րողութիւններին: Իբրև արդիական նյութ կարելի չե նշել—պիտոններնե-
րի, հեղափոխութեան առաջնորդների, հեղափոխական տոների մա-
սին: Կարելի չե նյութ վերցնել նաև ուրիշ լերկերներ: չերխսաների
կյանքից, բանվորի ու գյուղացու կենցաղի ու պայքարի, տեխնիկայի
նվաճումների, բնութեան չերեւութները մասին և այլն:

Պատմվածքները պետք և ընարել զգուշութեամբ. գոյութիւն ու-
նեցող մանկական գրականութիւնը շատ աղքատ և հաջող ու հետա-
քրքրական պատմվածքներով, վորոնք մատչելի լինելին նախադպրո-
ցականին ու բովարտելին արդի մանկավարժութեան պահանջները:
Մանկական գիրքն ընտրելիս պետք և ինկատի ունենալ հարմար ու
համապատասխան բովանդակութիւնը, գեղարվեստական արժեքը, ճիշտ,
թեթեւ, կենդանի վճճն ու պարզ մատչելի կառուցվածքը և վերջապես
գեղարվեստական նկարները:¹

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԴԱՍՏԻՍ-
ԲԱՎՈՒԹՅՈՒՆ

Գեղարվեստական դաստիարակութիւնը
չպետք և սահմանափակել առանձին ինքնու-
րույն մոմենտներով ու զբաղմունքներով (չերգ-
չերաժշտութիւն, նկարչութիւն և այլն), այլ պետք և ընդգրկել հիմ-
նարկի ամբողջ կյանքն ու աշխատանքը: Գեղարվեստական դաստիա-
րակութեանն ամենից առաջ պայմանավորում և հիմնարկի առողջա-
պահական-սանիտարական վիճակով, դուրեկան ու նպատակահարմար
կահավորութեամբ, զարդարանքներով (նկարներ, ծաղկամաններ, քան-
դակներ), անդորր ու աշխույժ տրամադրութեամբ, մտերիմ ու սիրայիլը
վերաբերմունքով, հիմնարկի կարգ ու կանոնով և վերջապես չերխսա-
ների արտաքինով, մաքրութեամբ և այլն: Խոսք չի կարող լինել գե-
ղարվեստական դաստիարակութեան մասին, չիթե հայհոյանք ու կոպ-
տութիւնն և նկատում, չիթե բացատրում և թաշկիտակի ու սրբիչի
գործածութիւնը կամ ամենուրեք թափթփվածութիւնն ու անփութու-
թիւնն և նկատում,—թեկուզ չերխսաները չերգում են կամ նկարում:

Իհարկե, կան առանձնահատուկ պայմաններ, վորոնք նպաստում
են գեսարվ. դաստիարակութեան. որինակ, հիմնարկը զարդարելիս կամ
կահավորութիւնն ընտրելիս, չերխսաների համար զգեստներ կամ ա-
մանեղեն ընտրելիս ինչնու ինկատի չառնել նաև այդ իրերի գեղար-

¹ Методич. письмо № 10.

Яновская.—Нужна ли сказка...

վեստական կողմը. թող սենյակների պատերն ու կահույքը ներկած լինեն հաճելի, տրամադրող դուշներով, պատերը զարդարած լինեն գեղեցիկ նկարներով ու վառ մակերեսներով (թղթից), պատշգամբը—գալարվող բույսերով, պարտեզը—գունեղ ծաղիկներով:

Գեղարվեստական դաստիարակութեան առանձին մոմենտներն (նկարչութիւն, չերաժշտութիւն, ուիթմիկա, չերգ և այլն) այն ժամանակ միայն գնահատելի չեն ու նպաստում են ընդհանուր խնդիրների իրագործման, չերը նրանք զղխում են հիմնարկի կյանքից ու պահանջներից, կապ ունեն հիմնարկի շրջապատի ու պայմանների հետ և խրախուսում են չերեխաների ինքնագործունեութիւնը¹:

Առհասարակ բոլոր նյութերն ու պատկերացումները (образ), վոր տրվում են չերեխաներին՝ բառը, չերանակը, նկարը,—պետք է համապատասխանեն տվյալ տարիքի հետաքրքրութիւններին:

Ինչ վերաբերում է չերաժշտական—ուիթմիկ զբաղմունքներին, այստեղ կարևոր են՝ չերգը, ուիթմիկ շարժումներն ու խաղերը, չերաժշտական ունկնդրութիւնը, պահպանելով գեղարվեստականութեան ու մատչելիութեան սկզբունքները՝ տեքստի, ուիթմի և չերաժշտականութեան տեսակետից:

Գեղարվեստական դաստիարակութեան բոլոր մոմենտները առավել ևս զբաղեցրվում են ու միաձուլվում տոների կատարման ընթացքում, չերեխ տոների գեղարվեստական կողմին հարկ չեղած ուշադրութիւն է տրվում: Տոները պետք է կապվեն հիմնարկի աշխատանքների հետ և նրանց նախապատրաստութիւնն ու կատարումը պետք է չերեխաների սկստիվ մասնակցութեամբ լինի:

ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ
ՀԱՇԻՎ

Նորմալ չերեխան գրաֆիկ խոսքով հետաքրքրվում է մինչև դպրոց մտնելը. չերե շրջապատող պայմանները նպաստավոր են, բանավոր և գրավոր խոսքի ձեւակացումն ուսուցումն անհրաժեշտութիւն չի հանդիսանում և կատարվում է բնական ու անբռնազբոսիկ կերպով, կապվելով չերեխայի առողջա զբաղմունքների հետ: Պատահում են գեպքեր, չերը 5—6 տարեկան չերեխաներն ել են հետաքրքրվում գրանցման—գրաֆիկ ձևակերպման պրոցեսով, բայց ընդհանրապես գրելու պահանջն զգացվում է 7-րդ տարվա շրջանում, չերը չերեխան կարիք է զգում իր տպավորութիւնները ֆիկսացիայի չինթարկելու, բանավոր խոսքը նրա գրաֆիկ սիմվոլով—բառով (գրավոր) փոխարինելու:

¹ Методич. письмо № 12.

Վեոչ մի դեպքում գրագիտութիւնը մանկապարտեզում սխտեմատիկ բնույթ ու հատուկ տեղ չի գրավելու, այլ սերտ կերպով ձուլվում և յերեխայի կյանքի ու աշխատանքների հետ և բղխում և նրա այս կամ այն պահանջից¹

Իսկ այդ պահանջներն հիմնվում են յոթնամյակի (6¹/₂—7 տ. յերեխայի) առանձնահատուկութունների վրա. վճռո՞ք են այդ առանձնահատուկութունները.

«Այս տարիքում առանձնապես արտահայտվում և յերեխայի ակտիվութիւնը, նրա հասարակական բնազդները. յերեխան ձգտում և սոցիալական շփման, — աշխատել ուրիշի հետ, ոգնել, ոգնութիւն ստանալ. միաժամանակ՝ կռիւ, մրցում, ֆիզիկական լարումն, փորձ ու զննութիւն: Հասարակական բոլոր դեպքերն անդրադառնում են նրանց խաղերում (կոտպերատիւ, միլիցիա, կինո, թատրոն, միտինգ և այլն)՝ մեծ հետաքրքրութիւն են առաջ բերում շարժվող գործիքները, մեքենաները...

Յեւ անա միանգամայն տեղին՝ գրագիտութիւնը՝ դալիս և խրատուսելու սոցիալական շփման պահանջները... և նա (գրագիտութիւնը) նպաստում և այս բոլոր պահանջների բավարարման, որդանապես ձուլվելով յերեխայի միջավայրի կազմակերպման հետ և հենվելով նրա (յերեխայի) հետաքրքրութիւնների վրա:

Այսպիսով գրագիտութիւնը դառնում և մի միջոց, վորին դիմում և յերեխան իր կոլեկտիվի կազմակերպման խնդիրներում, հանձնաժողովի աշխատանքները վորոշելիս, հերթապահութիւն նշանակելիս, բնութիւն յերեւոյթներն արձանագրելիս, որվա աշխատանքն ու նյութը հաշվի առնելիս, ստուգելիս, բաշխելիս և այլն²...

Այս հանգամանքն արդեն կանխում և գրագիտութիւն մեթոդը. դերադասելի չե այն մեթոդը, վոր նպաստում և մանկան գաղափարների ու փորձի հարստացման, մանկկոլեկտիվի կազմակերպման և ունի դիտական-հողերանական արժանիք:

Համադրական (տառաշարային, հնչական, հնչյունական) մեթոդները չեն համապատասխանում այս պահանջներին, վտարում են յերեխայի կյանքից նրան հետաքրքրող յերեւոյթները, արհեստակաւնութիւն և մտցնում, վերացական, անհետաքրքիր ու ձանձրալի գրադմունքներ են պահանջում (վերլուծել, համադրել, ուսումնասիրել

¹ Методич. письмо № 2.

Шлегер—Подход к грамоте.

² Մ Դուրգարյան—Գրագիտութ. մեթոդները. 1927 թ. № 2. «Ժող-լուս»:

տառեր, հնչույթներ, վանկեր, բառեր, սրանց ձևը, բնութիւնը և այլն)։

Ահա այս տեսակետից՝ գերադասելի չեն վերացական մեթոդները (ամբողջական բառ, բառապատկեր, միտք, ֆրազա և այլն), վոր ի մի ամփոփելով, կարելի չե անվանել «ամբողջական բառերի մեթոդ»։

Այս մեթոդով աշխատելիս լերեխաները զրազիտութիւնն ունենալով վերցնում են իրենց կլանքից, շրջապատից, առօրյա զրազմունքներից, իսկ գործնականում աշխատանքը կարելի չե ձևակերպել հետևյալ կերպ, վերցնելով զրազիտութիւնն Փորմալ ընթացքը.— լերեխաները դիտողականորեն հիշում են ղեկավարի գրած (կամ տպած) բառերը, ընդորինակում են այն («ենկարում են») և հետագայում, հետգհետե, ինքնուրույն աշխատանքի չեն անցնում։ Սկզբում զրվում ե մեկ-լերեխու բառ, վորեւ առարկայի կամ գործողութիւնն անուն, վոր անմիջապէս կապված ե իրադարձի հետ («կինո», «դաս», «կատու», «սուս, դաս ե», «հերթապահ ե»...), այնուհետե կարճ նախադասութիւններ, պլակատներ («Կեցցե Մալխի մեկը», «Մարտի ութը», «Կենդանի անկույն») և այլն։

Գրագիտութիւնն համար անհրաժեշտ են վորոշ պիտույքներ, վորոնք սակայն պետք ե շատ պարզ լինեն և կարող են պատրաստվել լերեխաների և ղեկավարների ձեռքով.— Ֆաներայից կամ տախտակից շինած քարտեր՝ լերեխաների անուններով, ճաշի կամ նախաճաշի կերակուրներ, հերթապահներ, առողջապահական կանոններ և այլն։ Պիտույքները պետք ե շարժական լինեն, վորպեսզի լերեխաները կարողանան ընտրել, համադրել (КОМБИНИРОВАТЬ). այսպիսով նրանք վարժեցնում են վոչ միայն տեսողական, այլև մտտորային զգայարաններն ու շոշափելիքը։

Պլակատի գործածութիւնը չպետք ե չափազանցութիւնն հասցնել. պլակատը զրագիտութիւնն ուսուցման միջոցներից մեկն ե (պլակատալիս ինքնուրույն սխեսմ կամ մերող գոյութիւնն չունի). պլակատ կարող ե լինել միայն նկարը, միայն բառը, ալելի հաճախ՝ նկարը.— խորագրով. պլակատը կարելի չե կազմել պատրաստի նկարներից, լերեխաների կամ ղեկավարների նկարներից կամ գրածներից։

Նույնքան և ալելի արժեք ունեն գրագիտութիւնն հետ կապված խաղերը՝ բազմազան լոտոներ (առարկայի անուն, գործողութիւն, նկարների ընտրութիւն և այլն), վիճակախաղ, հրամաններ-հանձնարարութիւններ, կոտպերատիվ, ցիրկ և այլն¹։

Գրագիտութիւնն հետ կապված են մի քանի մասնակի խնդիրներ.

¹ Ձ. Աճեմյանի «Մաղ ու աշխատանք» գրքում կան այսպիսի խաղերի նմուշներ։

տպագրից ու ձեռագրից սկսելը, մեծատառերը, կետերը, գրութիան ձևը, անտող գրութուն, թանաքի գործածութիւնը և այլն: Այստեղ անհնար և պարզաբանել աց դ խնդիրները, սակայն մասսայական պրակտիկան հանգում և հետևյալ չեղբակացութիւններին.—

Սկսել տպագրից, տառը «նկարելով»:

Մեծատառերը պարզ են լինելու և փոքրատառերին նման:

Կետագրութիւնից սկզբում խուսափել:

Խուսափել անտող գրութունից (կան հակառակը պնդողներ),

Գրութիան նախորդելու չեն գրաֆիկ վարժութիւններ, կապելով այն իմաստալի նկարների հետ:

Մտախի և գույների գործածութիւնը թուլլատրելի չէ:

Գրութիան ձևը—մտակցնել ուղղահայացին, առանց կետերի, մազականների և զրել անջատ:

Հաճիվը նուշնպես մանկապարտեզում չի կարող առանձին զբաղմունք լինել¹, թվական գաղափարներն ու հաշվելու ունակութիւնները չերեխան ձեռք և բերում կենսական մոմենտների ընթացքում և այս աշխատանքն սկսվում և փոքրիկների հետ զեռես, — հաշվելով խաղալիքները, նյութերը, բացակայող ընկերներին և այլն: Փոքր խմբում կարելի չէ բավականանալ մինչև 5-ը, մեծերի հետ (6—7 տարեկան) մինչև 10-ը գործողութիւնները (գործնական), հաշվել մինչև 20-ը, տասնյակներով՝ մինչև 50: Բարձր խմբակում չերեխաների կլանքի կազմակերպման ավելի բարդ ձևերին անցնելիս, ավելի հաճախ են հանդիպում հաշվի գործածութիւն մոմենտները, նուշնիսկ վորակական հաշիվը (առաջին, չերկրորդ և այլն): Հաշիվը բարդ դեպքերում կոնկրետ միջոցներով և տարվում, առանց սակայն ժխտելու նպատակահարմար դիդակտիկ նյութերը (ձողեր, համրիչ և այլն): Մեծերի խմբակում գրադիտութիւն հետ զուգընթաց կարելի չէ թվանշանների պրակտիկ ծանոթութիւնն անցնել — ոգտագործելով ժամացույցը (արաբական թվանշաններով), որացուցը, տան համարը, դրամները, հեղափոխական տոների ավլալները (Մարտի 8-ը, Նոյեմբերի 9-ը, Մալիսի 1-ը և այլն):

Հաշիվը նուշնպես կարելի չէ կապել աշխուժ և հետաքրքրել խաղերի հետ (լոտո, ցիրկ, «15», «կախարդական քառակուսիներ», շարժական խաղեր և այլն):

¹ Тихеева — Счет в жизни маленьких детей.

IV. ՆԱԽԱԳՊՐՈՑԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱԾԽԱՏԱՆՔԸ

Նախագաղտնային հիմնարկի հասարակական-մանկավարժական աշխատանքների հիմնական խնդիրներն են՝ նախագաղտնային դաստիարակութան զարգացման և բնակչության կուլտուրական մակարդակի բարձրացումը, մանկան առողջացումն ու դաստիարակութան պայմանների բարելավումը և վերջապես աշխատավոր մորը (բանվորուհուն և գեղջկուհուն) սոցիալական ոգնությունը ցույց տալը: Այս աշխատանքները մենակ չեն տանում նախագաղտնային հիմնարկները, քանի վոր նույն խնդիրները շատ թե քիչ չափով դրված են նաև այլ հասարակական-խորհրդային կազմակերպությունների և այն ձեռնարկների առաջ, վորոնց սպասավորում և նախագաղտնային հիմնարկը: Որինակ, արտադրության կուլտ-կոմիտեան նպաստում է բանվորների կուլտուրական մակարդակի բարձրացման, կազմակերպում է մեծերի ժամանցը. կին-կոմիտեան կնոջը հասարակական աշխատանքների մեջ է ներգրավում, կենցաղային-դաստիարակչական խնդիրներով է ղրաղվում. աշխատանքի պաշտպանություն կոմիտեան բարելավում է աշխատանքի ու կենցաղի պայմանները և այլն¹:

Այսպիսով մենք տեսնում ենք, վոր նախագաղտնային հիմնարկի և բնակչության ու ավելի արտադրության առաջ դրված խնդիրները համախոհ նույննանում են, ուստի և հիմնարկը չի կարող կղզիացած աշխատել:

Հասարակական կազմակերպությունների ու բնակչության հետ տարվող աշխատանքները նախագաղտնային հիմնարկի համար հետևյալ հնարավորություններն են ստեղծում. ա) դուրս գալ հիմնարկի պատերից և հասարակական կյանքի հետ կապվել, բ) միասնական աշխատանքի շնորհիվ և դրանց հետևանքով հասարակական հեղինակություն ձեռք բերել, գ) ոգտագործել այդ մարմինների աջակցությունը; վերջիններիս կողմից մշակած աշխատանքի ծրագրի համաձայն: Զպետք է մոռանալ նաև այն հանգամանքը, վոր նախագաղտնային հիմնարկի նպատակների մեջ է մտնում վոչ միայն իր ընդգրկած լերելիաների հետ աշխատելը, այլև ամեն կերպ նախագաղտնային ցանցի զարգացման (ընդլայնման) նպաստելը և դաստիարակչական ոգնությունը ցույց տալը այն ընտանիքներին, վորոնց լերելիաները նախագաղտնային հիմնարկներից դուրս են մնացել:

¹ Галина и Залкинд—Общественная работа дошкольника. Методическое письмо № 4:

Նայած թե վորտեղ և ինչպիսի միջավայրում և աշխատում նախադպրոցական հիմնարկը, ըստ այնմ ել կապ և հաստատում համապատասխան կազմակերպութիւններ չհետ: Արտագրութիւն կից դործող մանկապարտեզն առաջին հերթին կապվում և դործարկում, կուլտահանձնաժողովի, կոմկուսի և ԼԿՅԵՄ բջիջների, բան-գեղջրածնի, պիտներջոկատի հետ. քաղաքային մանկապարտեզը— համապատասխան պրոֆմարմինների, քաղխորճի, կին-բաժնի, կոոպերացիայի, կուս և ԼԿՅԵՄ բջիջների, պիտներների ու կոոպերացիայի հետ. գլուղական մանկապարտեզը— գլուղի համապատասխան մարմինների հետ (գլուղխորճուրդ և սեկցիաներ, շրջորճում, պիտներներ, կուսբջիջներ, պատգժողով, փոկ, կոոպերացիա և այլն):

Բացի հիշյալ կազմակերպութիւններից նախադպրոցական հիմնարկին անհրաժեշտ և կապվել ու գործակցել դպրոցի, առբաժնի ու բժշկի հետ, նաև ըստ կարիքի այս կամ այն կազմակերպութիւն ու մարմնի հետ՝ մանակալորակես (որինակ՝ աշխատանքի պաշտպանութիւն կոմիսիա, «Մանուկների բարեկամ» ընկ., դիսպանսեր և այլն):

ԿԱՊԻ ԲՆՈՒՅՔԸ

Բացի ընդհանուր խնդրներէրէց (նախադպրոցական դաստիարակութիւն պրոպագանդա, կենցաղի բարելավում, մանկավարժական ոգնութիւն, գործնական ոժանդակութիւն ստանալը և այլն), այս կամ այն հիմնարկի ու կազմակերպութիւն հետ կապվելիս նախադպրոցական հիմնարկը հատուկ նպատակներ և հետապնդում. որինակ՝ պատգամավորական ժողովներ և նրանց սեկցիաների ղեկավարութիւն, կոոպերացիայի հետ— կոոպպրոպագանդա և աշխատանք կոոպերատիվ հիմնարկներում, սանսեկցիայում— սանպրոպագանդա, ոգնութիւն առողջապահական ձեռնարկներում (կոնսուլտացիա, պալքար համաճարակների դեմ), պիտներների հետ— պիտներական աշխատանքներ զմանկավարժական հրակողութիւն, կուսբջիջի հետ— վերջինիս կողմից իղեղողիական ղեկավարութիւն, քաղպատրաստութիւն ու ժեղացում (նախադպրոցականների) և այլն: Անշուշտ, զժվարե այս բոլորի հետ տեսական կապ պահպանել և ծրագրված աշխատանք տանել. լուրաքանչլուր նախադպրոցական հիմնարկ, ըստ իր միջավայրի և պայմանների, ընտրելու չե այս կազմակերպութիւններից մի քանիսը, վորոշ ղեպքերում աշխատանքի բաշխում կատարելով (չեթե մեկից ավելի ղեկավար կա) և այնուհետև ծրագրելու չե իր աշխատանքը նրանց հետ, ծանոթանալով և համաձայնեցնելով նրանց ծրագրին, վորից հետո և սկսում և տեսական աշխատանք:

Ինչպիսի ընտրութիւնն ել վոր անի նախա-
զպրոցական հիմնարկն իր աշխատանքները
կազմակերպված բնակչութեան հետ համաձայ-
նեցնելու նկատմամբ, աչնուամենայնիվ նա անխուսափելիորեն աշ-
խատելու չե նաև անկազմակերպ բնակչութեան և, առաջին հերթին,
ծնողներին հետ: Նախազպրոցական հիմնարկում տարվող աշխատանքն
այն ժամանակ միայն արդյունավետ կլինի, չեթե նա ընտանիքում ել
կշարունակվի: Պետք է ծնողներին ծանոթացնել մանկապարտեզին,
մոտեցնել նրան և չերեխայի առողջացման աշխատանքն ընտանիքում
ևս տանել: Ծնողներին հետ աշխատանքը պետք է հինց հիմնարկի կազ-
մակերպման որերից սկսել, չերբ անհրաժեշտութիւնն է զգացվում աչ-
ցելել ընտանիքները, ծանոթանալ չերեխայի կյանքի պայմաններին.
ահա հենց այստեղից ել սկսվում է կապի սահմանումը:

Հետագայում աչդ կապը սիստեմատիկ բնույթ է ստանում և կազ-
մակերպվում—ժողովներին, անհատական զրույցի, այցելութիւններին ու
կոնսուլտացիայի միջոցով: Վերջին խնդիրը նոր է և մեծ կարևորու-
թիւնն ունի նախազպրոցական դաստիարակութեան մասսայականաց-
ման, մանուկների առողջացման, ինչպես նաև անխնամութեան դեմ
պայքարելու տեսակետից: Նախազպրոցական հիմնարկն իր թաղի կամ
գյուղի կուլտուրական կենտրոնն է դառնալու. այդտեղ է դիմելու չու-
րաքանչչուր ծնող, չուրաքանչչուր քաղաքացի, վոր ուզում է իմա-
նալ, ինչպես դաստիարակի իր չերեխային, ինչով կերակրի, ինչպես
հագցնի, ինչով զբաղեցնի նրան և այլն: Հարկ չեղած դեպքում կոն-
սուլտացիան կարելի չե տեղափոխել կին-բաժին, ակումբ, գյուղխոր-
հուրդ կամ դպրոց, կցել մայրութեան ու մանկութեան պաշտպանութեան
կոնսուլտացիային, մի խոսքով—վորտեղ ավելի նպատակաւորմար է:
Կոնսուլտացիան պետք է աչնպես կազմակերպել, վոր նրա հրահանգ-
ներն ու ոգնութիւնը կոնկրետ լինի, հետաքրքրող. կենդանի խոսքի
հետ միաժամանակ պետք է տալ ցուցահանդես, ցուցադրել չերեխա-
ների աշխատանքները, նրանց խնամքին ու զբաղմունքին վերաբերող
իրերը, մատչելի գրականութեան պլակատներ, նկարներ և այլն:

Իհարկէ, մասսայական կոնսուլտացիայի նպատակներով կարելի
չե ոգտագործել նաև բնակչութեան և հատկապես ծնողական ժողով-
ները: Այս ժողովներում կարելի չե ծանոթացնել նաև հիմնարկի կյան-
քին—մանկապարտեզի նպատակներին, նրա կազմակերպման ու տըն-
տեսական աշխատանքներին, զեկուցել դաստիարակչական-առողջա-
պահական առանձին խնդիրներին ¹ և մանկհիմնարկի գործունեութեան

¹ Ինկատի ունենալ Սոցիալիստական Հանրամատչելի մանկավարժական
գրադարան և ուսուերին «Понял. увидел. по дошбе. вош» բրոշյուրները:

մասին, տոների ու կամայանիաների առթիվ և այլն: Այս աշխատանքները կարող են տանել վարիչը, ղեկավարները, բժիշկը, դպրոցի ուսուցիչը, պիտները, կուսըջիջի քարտուղարը, կին-հրահանգչուհին և այլն:

Բացի ընդհանուր ժողովներից կարելի չէ հրավիրել նաև խմբակի ծնողական ժողով, ուր զբվում են այդ խմբակի առթիվ խնդիրներ, որինակ—մանկան առողջապահութունը, խնամքը, ուժիմը (քնի, սննդի, ողն ու արևն ոգտագործելու), նրա հետ վարվելու մասին (պատիժների միասը, խաղերի մասին) և այլն: Այս հարցերը քննելիս պետք է խնկատի առնել մանկապարտեզում ձեռնարկելիք միջոցներն ու ծնողների մասնակցութւյան անհրաժեշտութւյունը (նաև հափն ու ձեերը), ինչպես նաև նուչն խնդիրների ճիշտ կազմակերպումն ընտանիքում:

Բացի ժողովներից ու կոնսուլտացիայից մանկապարտեզն ունի այլտացիայի ու պրոպագանդայի այլ միջոցներ. սրանք են՝ հասարակական հանդեսներն ու ցուցահանդեսները, չերեկուլթ-ցիբեկուլթները, հարկիավութւյունները և հատուկ ղեկուցումները խորհրդում, նրա սեկցիաներում, կոոպերացիայի և պատգամավորական ժողովներում, ակումբում, խրճիթ-ընթերցարանում, համագումարներում և այլն:

Արդյունարեբական ձեռնարկներում, ակումբներում ու խրճիթներում կարելի չէ կազմակերպել ճշախաղպրոցականի անկչուն կամ սենյակ», ճմոր ու մանկան սենյակ» և այլն: Պրոպագանդան պետք է կազմակերպել նաև մամուլում և պատի լրագրերում: Վերջապես նախադպրոցական դաստիարակութւյան ագիտացիայի լավադուչն ու գործնական միջոցներից մեկն է ամառային մանկական հրապարակը¹, մասնավանդ գլուղում ու բանվորական վալրերում, վորն իրոք գործով ապացուցում է նախադպրոցական դաստիարակութւյան անհրաժեշտութւյունն ու նրա անհերքելի ոգուտները (չիբեխաների խնամքն ու դաստիարակութւյունը, նրանց առողջացումը, կնոջ ազատագրումը և այլն): Մանկական հրապարակը միաժամանակ նպաստում է նաև նախադպրոցական ցանցի զգալի ընդլայնման:

Այն բոլորից, ինչ վոր ասվեց, հետեում է, վոր մանկապարտեզը հասարակական հիմնարկութւյուն է և ամենասերտ կապերով կապվում է շրջապատի հետ. պարզ է ուրեմն, վոր կազմակերպման, պահպանու-

ՄԱՆԿԱՊԱՐՏԵՋԻ ՆՈՐ-
ՉՈՒՐԻԸ²

¹ Մ. Գուրգարյան.—Էրնչ և մանկ. հրապարակը» և ԵՊատուցեք մանկական հրապարակ»:

² Լժկ-մատի Տեղեկագիր, 1928 թ. № 2—3, նախադպրոցական հիմնարկների կանոնադրութւյուն:

Թիւն ու աշխատանքներին մասնակցում են նաև դրսի ուժերը, վորոնք բոլորը միանում են մանկապարտեզի (մանկոջախի, հրապարակի և այլն) խորհրդի մեջ: Այդ կապը պետք է սահմանել հիմնարկի կազմակերպման որերից, հետազոտում ծրագրված աշխատանքներ՝ տանելով խորհրդի միջոցով:

Սույն հատվածի (դլ. IV) սկզբում մենք թվեցինք հիմնարկին գործակցող մի շարք կազմակերպութուններ. բացի այդ կազմակերպութունների ներկայացուցիչներից խորհրդի կազմի մեջ մտնում են հիմնարկի վարիչը, ղեկավարները, բժիշկը, տեխնիկական աշխատավորներից մեկը, ծնողների ներկայացուցիչները՝ մեկական անձ յուրաքանչյուր խմբից և դպրոցի ու մտերի ներկայացուցիչները, լեթե այդ հիմնարկների հետ մանկապարտեզը կապ է պահպանում: Գլուղմանկապարտեզում, մանավանդ լեթե 1—2 խմբակ ունի, դպրոցի և մանկապարտեզի խորհուրդը կարելի է միացնել: Խորհուրդն ընտրվում է մեկ տարի ժամանակամիջոցով: Խորհրդի նիստերը հրավիրվում են ամիսը մեկ անգամ, իսկ հանձնաժողովների (տնտեսական և հասարակական-մանկավարժական) նիստերը—ավելի հաճախ:

Հասարակական մարմինների ներկայացուցիչներին աշխատանքների մեջ ներգրավելու նպատակով՝ խորհուրդը բաժանվում է յերկու սեկցիայի՝ հասարակական-մտկավարժական և սնեստական: Առաջինը մասնակցում է հիմնարկի ծրագրերի ու ղեկուցումների մշակման ու քննութիւն, այցելութունների ու հերթապահութիւն միջոցով ծանոթանում է գործնական պարապմունքներին, կազմակերպում է և վորոշ աշխատանք տանում ծնողների ու ընակչութիւն հետ: Հանձնաժողովն իրագործում է այն կապը, վոր նախագծված է հասարակական կազմակերպութունների ու արտադրութիւն հետ, հետազոտում է լեթե իրաների՝ միջավայրն ու ընտանեկան պայմանները և միջոցներ է ձեռնարկում այդ պայմանների բարելաման համար. վերջապես՝ լայն մասսաների մեջ ազդեցիկա ու պրոպագանդա լե տանում:

Տնտեսական հանձնաժողովը հող է տանում հիմնարկի նյութական դրութիւնը բարելավելու մասին, հսկում է տնտեսական ծախսերի վրա, կանոնավորում է լեթե իրաների սնունդը, հիմնարկի կահավորութիւնը, ոգնութիւն և ցուլց տալիս տոներին, ոժանդակում է լեթե իրաներին ամառանոց տանելու, չքավորներին ոգնելու խնդրում և այլն:

Հանձնաժողովներն իրենց ծրագրերն ու հաշվետվութիւնը ղեկուցում են խորհրդին, իսկ խորհրդի յուրաքանչյուր անգամ հաշիտու լե այն կազմակերպութիւն ագաջ, վորն իրեն ուղարկել է. թե խորհրդի անդամները և թե հանձնաժողովները կարող են ղեկուցել

նաև ծնողական ժողովներին՝ տեղյակ պահելով նրանց անց ու դարձին և հիմնարկի նպատակներին ու պահանջներին:

Հիմնարկի վարիչը հաշվետու չե վերադաս որդանների (լուսբաժին, ակումբ, կոոպերացիա և այլն, չեթե վերջիններիս դժով և բացվել) և այն հիմնական կազմակերպության առաջ, վորին սպասավորում և հիմնարկը:

Բոլոր դեպքերում մանկավարժական աշխատանքների ղեկավարությունը լուսորդաններին և վերապահվում:

V. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ՀԱԾՎԱՌՈՒՄԸ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ

Աշխատանքի հաջողության համար անհրաժեշտ պայմաններից մեկն և նրա ծրագրումը (պլանավորումը): Պլանավորել աշխատանքը, նշանակում և հաշվի առնել այն բոլոր պայմաններն ու հնարավորությունները, միջոցներն ու դժվարությունները, վորոնց մեջ ընթանալու չե աշխատանքը:

Յիսնելով նախադպրոցական դաստիարակության նպատակներից ու խնդիրներից, լուսբաժանչյուր հիմնարկ իր աշխատանքը կառուցելու չե այն կոնկրետ պայմանների ու հնարավորությունների վրա, վորոնց մեջ ապրում և, վորոնք գոյություն ունեն վորոշ ժամանակամիջոցի նկատմամբ ¹:

Աշխատանքի ծրագրի ճիշտ կառուցման համար ամենից առաջ պետք և հաշվի առնել հիմնարկի արտաքին ու առընթեր (մոտիկ) միջավայրը.— արտադրական շրջապատը (գործարան, արհեստանոց, կոլտնտեսություն, հիմնարկներ և այլն), հատկապես այն արտադրությունը, վորի հետ կապված և ծնողների մեծամասնությունը. պետք և ծանոթանալ տվյալ վայրի կամ թաղի քաղաքական, հասարակական, կուլտուրական ձևոնարկներին, ընակչության քաղաքական, տնտեսական, կուլտուր-կենցաղային ընդհանուր մակարդակին և շրջապատի բնական միջավայրին:

Այս գործոններից լուսբաժանչյուրն ունի իր տեղն ու դերը, ուստի և պետք և ծանոթանալ ու վերլուծել, վերցնելով միայն այն, վոր ուղղակի կամ անուղղակի կերպով կարող և ազդել չերեխաների վրա: Հատկապես պետք և ուշադրություն դարձնել ընտանիքի մանկավարժական, կուլտուր-կենցաղային, առողջապահական, հասարակական-

¹ Методич. письмо № 5.

քաղաքական և տնտեսական պայմանների վրա (ծնողների դասակարգային գիտակցութիւնը, դրբի ու լրագրի ոգտագործումը, հին ու նոր կենցաղի չերևույթները, բնակարանային պայմանները, չերեխայի քուներ, սնունդը, ծանրաբեռնումն ու դրութիւնն ընտանիքում, փողոցի ազդեցութիւնը և այլն):

Առընթեր (մերձակա) միջավայրը պիտի հաշվի առնվի սոցիալ-դասակարգային, արտադրակնա-աշխատանքային ու կուլտուր-կենցաղային ուղղութիւններ և Ֆիզիկական Ֆակտորների տեսակետից (ոգ, ջուր, սնունդ, արև և այլն):

Այնուհետև կարևոր է հաշվի առնել հիմնարկի ներքին միջավայրը—շենքը, նյութական բազան, ունեցած կահավորութիւնն ու գույքը, աշխատակիցների կազմն ու վորակը, չերեխանիրի քանակը, տարիքը, սոցիալական կազմը, Ֆիզիկական դրութիւնը (առողջութիւնը), նրանց դարգացման մակարդակը՝ ունակութիւնների (աշխատանքային, առողջապահական, լեզվական, սոցիալական և այլն) տեսակետից, նրանց ունեցած մտապատկերների պաշարը, սնանավատութիւններն ու կենցաղային գծերը:

Ներքին ու արտաքին միջավայրի տվյալները վերլուծելիս պետք է դրսևկորել այն բացասական կողմերը, վոր անհրաժեշտ է հետագայում վերացնել չերեխաների և ընակչութեան հետ տարվող ծրագրված աշխատանքի միջոցով և, ընդհակառակը, գտնել այն դրական մոմէնտները, վորոնք կարող են նպաստել հիմնարկի առաջադրած խնդիրների իրագործման:

Երջապատի ու մանկկոլեկտիվի ուսումնասիրութեան տվյալների հիման վրա հիմնարկը վորոշ ժամանակամիջոցի համար ընտրում է մի շարք կոնկրետ կենսական-մանկավարժական խնդիրներ՝ թե չերեխաների և թե ընակչութեան հետ տարվող աշխատանքների նկատմամբ: Որինակ, չեթե պայմանների վերալուծմամբ պարզվում է, վոր չերեխաները վատառողջ են կամ այս ու այն հիվանդութիւնների տրամադիր, չեթե ընտանիքի կուլտուրական մակարդակը ցածր է կամ առողջապահական պայմանները վատ են (մեծերի հետ մի անկողնում են քնում, սենյակները չեն ողափոխում, չերեխաները տառապում են թոքերի թուլութիւնով կամ նյարդային են),—պետք է ուրեմն սահմանել համապատասխան ռեժիմ, ուժեղացնել սնունդը, ոգտագործել ողն ու արևը, առանձին անկողին, ամանեղեն, չերեսսրբիչ տրամադրել չերեխաներին և այլն:

Յեթե պարզվում է, վոր չերեխաները սովոր չեն կոլեկտիվ կյանքի, քաշվող են, չեսասեր, քմահաճ և այլն,—հիմնարկի առաջ կարևոր

բազուէն հարց ե զըվում չերեխաներին կոչեկտիվ աշխատանքի վար-
ժեցնել, նրանց ակտիվութունն ուժեղացնել և այլն:

Պայմանների հաշվառումը կարող ե առաջադրել և այլ կենսական-
մանկավարժական խնդիրներ, — որինակ՝ չերեխաներին շրջապատի հետ
կապել, մոտեցնել արդիականութեանը, նրանց մեջ աշխատանքային
ուճակութեւններ պատվաստել, պայքարել սնահավատութեւններին
դեմ և այլն, համապատասխան աշխատանքներ տանելով թե չերեխա-
ների և թե բնակչութեան հետ: Նույն հաշվառման հետեանքով կար-
ող ե անհրաժեշտութեւն ստեղծվել հիմնարկի տնտեսականը բարե-
լավելու, գույք ու պիտուէքներ ձեռք բերելու և այլ խնդիրներում:

Աշխատանքի կոնկրետ խնդիրները պարզելուց հետո, պետք ե
այս խնդիրների իրագործման համար տվյալ պայմաններում հնարա-
վոր աշխատանքի բովանդակութեւնը վորոշել: Աշխատանքի բովան-
դակութեւնը կառուցվելու չի մի շարք կենսական մոմենտներից, վոր-
ոնց շուրջը հնարավոր լինի կազմակերպել չերեխաների գործունե-
լութեւնը և այդ գործունեութեան շնորհիվ անհրաժեշտ ուճակու-
թեւնները պատվաստել և աշխարհալացքը լաւնայնել: Այսպիսի կազ-
մակերպող մոմենտներից են՝ որինակ, Մայիսի 1-ը, Մարտի 8-ը, Հոկ-
տեմբերյան ու Նոյեմբերյան (Հայաստանում) հեղափոխութեւնը, բեր-
քի տոնը, բանջարանոցի աշխատանքները, սանիտարական անկյան
կազմակերպումը և այլն:

Աշխատանքի բովանդակութեւնը վորոշելուց հետո պետք ե մտա-
ծել՝ թե ինչպես, ինչ միջոցներով ու միջոցներով պետք ե տանել այդ
աշխատանքը, ինչ նյութեր ու պիտուէքներ են պետք: Այս կամ այն
մոմենտի համապատասխան եքսկուրսիաներ, զբույցներ, խաղ կամ աշ-
խատանք պետք ե նշել. վորոշել խաղալիքները, աշխատանքային պրո-
ցեսներին համար անհրաժեշտ պիտուէքներն ու գործիքները, զբաղան
նյութը (զբոբուկ, պատմվածք), չերաժշտական նյութը — չերգեր, ութ-
միկ ու շարժական խաղեր և այլն:

Այս բոլորի հետ միաժամանակ պետք ե վորոշել նաև հիմնարկի
հասարակական-մանկավարժական աշխատանքը, վորն, ինչպես ասվեց,
հիմնարկի աշխատանքների անբաժան մասն ե կազմում և կապվում ե
առաջադրած կենսական-մանկավարժական խնդիրների հետ:

Այսպիսով ստացվում ե աշխատանքների ծրագրման հետևյալ
2 հիմնական ձևերը, վորոնցից մեկը, հիմնարկի աշխատանքների ցա-
րեկան ուղեցիր պլանն ե, մյուսը — առանձին խմբերի յեռամյա (տրե-
մեստրային կամ կվարտալային) ծրագիրը:

Սխեմա № 1. Հիմնարկի սարեկան արհեստիքի ծրագրի սխեմա

Պայմանները հաշվառումն ու վերլուծումը		Կենսական-մանկան վարժական խնդիրները	Հիմնական կողմնակերպող մասնիկները	Մանկական կյանքի սկզբնական	Մեթոդներ	Մատերիալ (նյութեր)	Հասարակական-մանկավարժական աշխատանք
Երջարարող միջավայրը	Ներքին միջավայրն ու մանկական կրթիկախիթը						

Սխեմա № 2. Խնդրակի յեռանդայ ծրագրի սխեմա

Փոփոխություններ		Տվյալ ժամանակամիջոցի կենսական-մանկավարժ. խնդիրները	Հիմնական կողմնակերպող մասնիկները	Յերբխանները կյանքի սկզբնական փուլում	Աշխատանքի ըրմանդակությունն ու ծրագրումը տվյալ ժամանակի համար			Մեթոդներ	Նյութ	Հասարակական-մանկավարժ. աշխատանք
Երջարարող միջավայրը	Մանկկրթիկախիթում և ներքին միջավայրում				Բնության խնդիրները	Աշխատանքային մասնատն.	Հասարակական մասնատնից			

Առաջին սխեման ձևակերպելու չե ամբողջ հիմնարկի տարեկան աշխատանքների պլանը, վորը հնարավոր է, ինչպես ասվեց, միջավայրի հիմնական ծանոթության և վերլուծման ղեկավարում:

Յերկրորդը (չեռամսյա) հիմնվում է նախորդ (տարեկան) ծրագրի նյութի վրա և գլխավոր տեղը տալիս է կազմակերպող մոմենտների կոնկրետացման ու ըրմանդակության պարզման (вскрытие): Յեռամսյա ծրագրում տեղ է տրվում տվյալ լամբակի արտաքին (ընտանիք) ու ներքին (մանկկրթիկախիթի) տվյալ հատվածի) պայմանները վերլուծման: Այս հիմնական աշխատանքը կատարվում է մեկ անգամ լրիվ, տարվա և առաջին յեռամսյակի սկզբում: Հաջորդ տարին հիմնարկն ուղտազործում է միջավայրի ուսումնասիրության նյութը, լրացումներ ու փոփոխություններ և մտցնում:

Նույնպես է խմբակի ծրագրերը. հաջորդ յեռամսյակներին (2-րդ, 3-րդ յեռամսյակ կամ 2-րդ կվարտալ) կարիք չի լինի նորից ուսում-

նասիրել միջավայրը կամ ընուկթագրել մանկկուլեկտիվի կյանքի ուժի-
մը, այլ պետք է մտցնել միայն առաջացող փոփոխութիւնները, վոր
կախոված են սեղոնի փոփոխութիւններից կամ նոր ստեղծված սլաշ-
մաններից (բուլջնի փոփոխութիւն, նոր լերեխաներ, ամառանոց փո-
խադրվելը և այլն):

Ավելի մանր միավորների վերածելը (շաբաթական, որական ծրա-
դիր) առանձին անհրաժեշտութիւնն է ներկայացնում: Հիմք պետք է
ընդունել կազմակերպող մոմենտը:

ԱՄԵՍԱՍԱՆՔԻ
ՀԱՇՎԱՌՈՒՄԸ:

Հաշվառումն իր մեջ է ամփոփում աշխա-
տանքի բոլոր կողմերը—նպատակները, կազ-
մակերպման միջոցները, կիրառվող մեթոդնե-
րը, գործադրած նյութն ու ժամանակը: Մանկավարժական աշխա-
տանքը շատ բարդ պրոցես է: Նա գործ ունի լերեխայի, նրա աճման
ու դարգացման հետ և նպատակ է դնում կանոնավորել ու զեկավա-
րել այդ աճումը: Նա գործադրում է միջոցներ ու մեթոդներ, վորոնք
փոփոխութիւն են լինթարկվում աշխատանքի ընթացքում: Նա ընդ-
գրկում է լերեխայի կյանքի ու գործունեյութիւնի ձևերը, գործադրում է
նյութական, բառային, պատկերացման միջոցներ: Այս բարդ աշխա-
տանքը դժվար է տանել առանց խճճվելու, չեթե չկա կանխապես
մշակված ծրագիր, չեթե մանկավարժը հետադարձ հալացք չզցի իր
կատարածի վրա, հաշի չառնելով իր նվաճումները, թերութիւնները,
բացերը և նոր պայմանները:

Մանկավարժական աշխատանքի հաշվառումը չի կարելի հետա-
ձգել մինչև աշխատանքի ավարտելը, այլ պետք է իրագործաց տարվի
ընթացիկ աշխատանքին, վորից առանձնացվում են կարևոր մոմենտ-
ները և արձանագրվում են հաշվառման տեսքում հետևյալ ձևով.

Որական աօխասանքի հաշվառումն. սխեմա № 3

Ամիս, քիվ, որ. հեղկա լերեխաները քանակը. Որ. նր. կն բաժնի բաժնի	(Գրգծադր) ընդուն գրգծադրում տրվել Սխեմա	Պարտա- դարձակ ճանաչում հարձակ ճանաչում Պարտա- դարձակ ճանաչում	Միջավայր փոփոխու- թիւններ Չափում Չափում Չափում	Մեթոդ Չափում Չափում Չափում	Մեթոդ Չափում Չափում Չափում	Մեթոդ Չափում Չափում Չափում	Մեթոդ Չափում Չափում Չափում	Մեթոդ Չափում Չափում Չափում
---	---	--	---	-------------------------------------	-------------------------------------	-------------------------------------	-------------------------------------	-------------------------------------

1 Методич. письмо № 9, по дошк. воспитанию.

Սակայն որական աշխատանքի հաշվառումը ղեռնս բաղական չի հետևանքների արժեքավորման տեսակետից: Մանկավարժական աշխատանքի նպատակն է լերեսխաներին կալուճն հմտություններ, հետաքրքրություններ ու գիտելիքներ հաղորդել, Այս բանի համար տևական ու սխտեմատիկ աշխատանք է հարկավոր, ուստի և պետք է ավելի տևական ժամանակամիջոց վերցնել՝ մի կամ մի քանի կազմակերպող մոմենտների մշակման ժամանակամիջոց: Այսպիսի ամփոփող հաշվառումը հետագա աշխատանքները ղեկավարելու, հաջորդ կազմակերպող մոմենտները ճիշտ կառուցելու և բոլոր բացերը վերացնելու փաստացի տվյալներ կտա մեզ:

Պարզ և, վոր տևական աշխատանքի հաշվառման (սխեմա № 4) նյութ են տալու ամենորյա հաշվառման (սխեմա № 3) գրանցումները, վորը մշակելիս պետք է աշխատել ամփոփել ընդհանուր և ընորոշ տվյալները, լեզրակացություններ հանելով սրանցից:

Տեխնիկան աշխատանքի (կազմ. մուճեմ.) հաշվառումն. սխեմա № 4.

<p>Ի՞նչ ժամանակամիջոց և քննդրվում հաշվառումը:</p> <p>Տեսչության մեջ արժեքավորման և հետաքրքրության հարցերի վերաբերյալ:</p>	<p>Հիմնական կազմակերպող մասնակցի, Առաջադրված մանկավարժական խնդիրները, Նախադրված պահից շեղումներ:</p>	<p>Պարտադրանքների սեռակները, քանակ և առաջնությունը:</p> <p>1. Ինժեներական մոմենտներ, 2. Կազմ. մոմենտի հետ կապված գրադուցումներ, 3. Այլապես գրադուցումներ:</p>	<p>Միջավայրում կատարված փոխադրանքները:</p> <p>1. Արտադրանքի և գրադուցումի նոր վարկեր, 2. Փոփոխություններ կատարվելու մեջ, 3. Նոր նյութ, 4. Նոր գեղեր:</p>	<p>Փորձաքրված միջոցները:</p> <p>1. Պարտադրանքների կազմակերպման միջոցները, 2. Պարտադրանքների ղեկավարման միջոցները:</p>	<p>Առաջացած դժվարությունները:</p> <p>1. Կազմակերպման կողմից, 2. Կատարման մեջ, 3. Նյութի մեջ, 4. Տեխնիկաների կողմից, 5. Հիմնական կողմից:</p>	<p>Տեխնիկաների արտադրանքները:</p> <p>1. Ստացված, 2. Աշխատանքային, 3. Կենցաղային, 4. Որդանական:</p>	<p>Հիմնական հասարակական աշխատանքներ:</p> <p>1. Մտորանքներ հետ, 2. Հասարակական կազմակերպություններ հետ:</p>
---	--	---	--	---	---	--	--

Հաշվառման ետապներից մեկն էլ տարեկան հաշվետվությունն է. լեզրակացի հաշվառումը կանոնավոր և տարվում, ինքըստինքյան

բավարար նյութ և սալիս նաև տարեկան հաշվետվութիւնս Պետք և միայն հավաքել այդ նյութը, սխտեմի վերածել և վերջնական չեղրահացութիւններ հանել: Տարեկան հաշվառումը (հաշվետվութիւնը) իր մեջ պետք և հետևյալ տվյալներն ամփոփի.—

1. Մանկիմանարկի և չերեխաների ընտանեկան միջավայրի հատվառումը.— արտադրական, կենցաղային, կուլտուրական, սանիտարական, բնութիւն:

2. Հիմնարկի բնդիմանուր պայմանների և նյութական բազայի հատվառումը.— տիպը, աշխատակիցները, մանկկոլեկտիվը, նյութական միջոցներն ու բյուջեն, հարմարութիւնները (շենք, զուգք, բակ և այլն) և առողջապահական-սանիտարական պայմանները:

3. Մանկավարժական աշխատանքի պլանավորումը (արտադրական պլան, կառուցման սկզբունքները, ձևը, ժամանակամիջոցը և այլն):

4. Մանկիմանարկի կյանքի կազմակերպումը.— Յորհուրդ, հանձնաժողովներ. մանկկոլեկտիվի կազմակերպման ձևերը:

5. Մանկական աշխատանքի՝ ըստ ամփոփող հաշվառման. ա) կազմակերպող մոմենտներ, շեղումները. բ) խաղ—բովանդակութիւնը, ձևը, մեթոդները. գ) աշխատանք (ձևը, մեթոդները, կազմակերպումը) և աշխատանքային ունակութիւններ. դ) լեզվական գործունեութիւն— գրույց, պատմվածք. նյութը, բովանդակութիւնը. լե) կերպարվեստ— (նկարչութիւն, ծեփ), մեթոդները, ունակութիւններ. զ) կապը շրջապատի և արդիականութիւն հետ. կ) Ֆիզիկական դաստիարակութիւն— սեփմը, քուն, սնունդ, բժշկական քննութիւն և հետևանքները. ը) հասարակական-մանկավարժական աշխատանք:

Մտատվորապես նույն ծրագրով կարելի չէ տալ նաև չեռամսյա հաշվետվութիւններ. նման հաշվետվութիւններ արվում են Լուսբաժնին, խորհրդին, ծնողական ժողովներում. հասարակական հաշվետվութիւնը կարելի չէ կապել տոների և ցուցահանդեսների հետ:

VI. ՀԻՄՆԱՐԿԻ ԿՈՆԵԿՏԻՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Մանկհիմնարկների աշխատանքի հաջողութիւնը մեծ չափով պայմանավորված է կոլեկտիվի կազմակերպութիւն ձևերով, աշխատանքի բաշխումով և այն փոխհարաբերութիւններով, վրը գտնութիւն ունի միշտ շարժման ու փոփոխութիւն լինելակա կենդանի որդանիդմի՝ կոլեկտիվի անդամների մեջ: Հիմնարկի կոլեկտիվը մի ամբողջութիւն է կազմելու. չերեխաներն ու դեկավարներն համախմբվում են

ընդհանուր աշխատանքի ու շահերի շուրջը, ապրում են ընդհանուր կյանքով, սակայն ամեն մեկն ունի իր հետաքրքրություններն ու նպատակները և իր վորոշ դերն այդ ընդհանուր կյանքում:

Կոլեկտիվի հատկանիշներն են՝ կազմակերպ-
ՄԱՆԿԱԿԱՆ ԿՈՒԵԿՏԻՎԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ¹
վածություն, աշխատանքի վորոշ բաշխում,
ընդհանուր շահեր ու նպատակներ և սրանցից
բղխող ընդհանուր ապրումներ: Պատահական
համախմբումը կոլեկտիվ չէ, չեթե չկան վերոհիշյալ հատկանիշները և
վորոշ մտերմություն ու փոխապարձ կախում: Սակայն մանկական
կոլեկտիվի ծավալը (չերեսխանների քանակը), անդամների փոխհարա-
բերությունն ու չուրաքանչյուրի բնորոշ դերը պայմանավորվելու չեն
նաև մանկան տարիքային առանձնահատկություններով, կենսաբանա-
կան կարողություններով և ունեցած ունակությունների ու մտապատ-
կեցիների չափով: Կոլեկտիվի կազմակերպումն ունի նաև իր ետապնե-
րը, վոր պետք և անպայման հաշվի առնել:

Յեթե հաջողվում և աշխատանքային մթնոլորտ ստեղծել, ճիշտ
ոնժիմ սահմանել և շրջապատի հետ կապվել,—այդ դեպքում հաջող-
վում և չերեսխաններին համախմբել կոլեկտիվի մեջ և ըստ իրենց ու-
ժերի մասնակից անել ընդհանուր կյանքին ու աշխատանքներին:
Այս մասնակցությունն աստիճանաբար և կատարվում և տարբեր
սկզբունքների վրա չեն հիմնվում՝ համագործակցություն և աշխատանքի
բաշխման: Սրանցից չերկուսն էլ ունեն իրենց առավելություններն
ու բացերը. համագործակցության դեպքում (ընդհանուր մասնակցու-
թյուն, ըստ ուժերի ու ցանկություն) աշխատանքն ավելի հաճելի չէ,
ավելի ազատ ու բազմակողմանի, սակայն չկա պատասխանատու-
թյուն և մասնակի նպատակներ. մինչդեռ աշխատանքի բաշխման
դեպքում մասնակի նպատակ և դրվում, աշխատանքն ավելի սահմա-
նափակ է, սակայն չուրաքանչյուրի վրա վորոշ պարտականություն և
դրվում: Մանկկոլեկտիվում կարող են չերկուս մեթոդներն էլ գործա-
դրվել, մեկը մյուսին հաջորդել ու փոխարինել: Սակայն կան աշխա-
տանքներ, վոր անհրաժեշտորեն ըլլորի մասնակցությունն են պա-
հանջում, որինակ՝ հերթապահությունը: Հերթապահությունն անհրա-
ժեշտ է սեղանատանը, կենդանի անկունում, դուշի խնամքի կամ
փոքրերին ոգնելու համար և այլն: Հերթապահությունը տևում է մեկ
որ՝ 2—3 հոգով: Այս բանի համար վորոշ կարգ և սահմանվում (ցու-
ցակ, քարտեղ և այլն):

¹ Аркин—Детский сад в свете соц. гигиены, гл. VI. Новые пути подготовки. 3. ст. Суровцевой.

Հերթապահութունը զլիսավորապես մեծերի խմբերում (5, 6, 7 տարեկան) և տարվում. փոքրերին նման աշխատանքներ կարելի է տալ՝ ըստ ցանկութան կամ անհատական ընտրությամբ:

Ինքնակազմակերպման պարզ ձևերից են նաև աշխատանքային խմբակներն ու հանձնաժողովները. առաջինները հանձն են առնում վորոշ աշխատանք, որինակ—կտորած խաղալիքները վերանորոգել, ղեկավարի հետ կոոպերատիվում գնումներ կատարել և այլն: Հանձնաժողովներն ավելի ակտիվություն ու կազմակերպվածություն են պահանջում: Նրանք պատասխանատու մարմիններ են և ավելի տեղական բնույթ ունեն (2—3 շաբաթ): Այսպես՝ սանիտարական հանձնաժողովն հսկում և չերեխաների մաքրության (վաղվելը, թաշլիքնակի գործածությունը և այլն), սենյակների ողափոխության վրա և այլն. համապատասխան աշխատանքներ են տանում նաև տնտեսական, կենդանի անկյան և ուսումնական (պիտույքների) հանձնաժողովները: Տոների, ամառանոց զնալու և այլ նման աշխատանքների համար կարող են հատուկ ժամանակավոր հանձնաժողովներ ընտրվել: Հանձնաժողովների թիվը պետք է սահմանափակել, կազմը պետք է բազմամարդ լինի, նրանք պետք է ընտրվեն մանկական ժողովներում և ամեն մեկում պետք է մասնակցի ղեկավարներից մեկը, նաև տեխնիկական աշխատավորն ու բժիշկը:

Աշխատանքի պրոցեսում վորոշ խնդիրների քննության համար մեկնակիան ժողովների կարիք և զգացվում. այս ժողովներում չերեխաները հասարակական ունակություններ են ձեռք բերում—կոլեկտիվ կերպով մտածել, լսել ուրիշին, հերթով խոսել և այլն: Մանկական ժողովների նյութ կարող է լինել՝ առարչա նիստ ու կացը, վորոշ պարտականությունների բաշխում, հանձնաժողովների աշխատանքի քննությունը և նոր անդամների ընտրություն, տոնի կամ եքսկուրսիայի նախապատրաստություն և այլն:

Մանկական ժողովներին զատի բնույթ չի կարելի տալ:

Ժողովները ղեկավարում և ուսուցչուհին, առանց ճնշելու չերեխաների ակտիվությունն ու նախաձեռնությունը. ժողովի վորոշումները պետք է կենսական և իրագործելի լինեն, վորպեսզի չերեխաները լրջությամբ վերաբերվեն ժողովներին. հարցերը պետք է սահմանափակ լինեն և ժողովը կարճատև լինի (10—20 րոպե): Ժողովի որեր չպետք է սահմանել նախապես:

Ժողովների ժամանակ ձևականություններն ավելորդ են (նախադահ և այլն). վորոշումները գրում և ղեկավարը. ցանկալի է գրի առնել ժողովի ընթացքը, չերեխաների կազմակերպվածությունն ու

ակտիվությունն աճումը պարզելու համար (իրենց բառերով, արտահայտությունները և այլն):

Մանկավարժական կոլեկտիվի աշխատանքն
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿՈԼԵԿ- հետևյալ ֆունկցիաներն և ընդգրկում. 1) մի-
ՏԻՎ ջափայրի (ОБСТАНОВКА) կազմակերպումը, 2)
աշխատանք չեքխաաների հետ, 3) ծրագրումն
և հաշվառումն, 4) հասարակական աշխատանք (ծնողների և բնակչության հետ)՝ բացի այս մանկավարժական կոլեկտիվը տանում և նաև հետադրոման աշխատանքներ, վոր մեր կարծիքով մի մասն և կազմում մնացած աշխատանքների (չեքխաաների և ծնողների հետ, ծրագրման աշխատանքների և այլն): Գիտական-հետադրոմական աշխատանքները մասսայական մանկավարտերի հնարավորություններից դուրս են:

Ինչպես վերևում ասվեց, հիմնարկի աշխատանքների հաջողությունը մեծ չափով պայմանավորված է կոլեկտիվի կազմակերպվածությունը: Հիմնարկի աշխատանքների խորացումը, միասնակամությունն ու կազմակերպվածությունը կախված է կոլեկտիվի (պերսոնալի) միահամուռ գործունեությունից, պարտականությունների նպատակահարմար բաշխումից և ընդհանուր գաղափարական ձգտումներից: Մեծերի միաձուլը, լավ կազմակերպված կոլեկտիվը մանկկոլեկտիվը ղեկավարող և նրա վրա ներազդող գործոններից մեկն է: Վե՛ր մի բան այնքան բացասաբար չի ազդում մանկկոլեկտիվի վրա, ինչքան կազմավորված պերսոնալը և աշխատակիցների մեջ չեղած տարաձայնություններն ու պարտականությունների անորոշությունը²:

Կոլեկտիվի իր աշխատանքները կանոնավորում է նիստերի միջոցով, վորին մասնակցում են՝ վարիչը, ղեկավարները, բժիշկը և տեխն. պերսոնալը (ներկայացուցիչը). վորոշ խնդիրներ (արտադրական ծրագիր, ղեկուցումներ, բյուջե, նոր ձեռնարկություններ և այլն) տեղափոխվում են հիմնարկի խորհուրդ կամ նրա հանձնաժողովները (տես եջ 44):

Մանկավարժական կոլեկտիվի նիստերին քննվում են առանձին խմբերի ծրագրերն ու հաշվառումը, ուժերի, սննդի, չեքխաաների խնամքի, եքսկուրսիաների, տոների և այլ խնդիրները, ինչպես նաև անհատական (չեքխաաների) խնդիրներ և ընթացիկ հարցեր:

¹ Тихеева—Детский сад, 1958 г. ГИЗ, стр. 57.

² Аркин—Детский сад в свете социальной гигиены.

Աշխատանքների առաջադիմութիւն տեսակետից անհրաժեշտ և աշխատակիցների սիտեմատիկ վորակավորումը՝ թե մանկավարժական և թե հասարակական-քաղաքական գծով: Անհրաժեշտ և նաև տեխնիկական աշխատակիցների վորակը բարձրացնել, մանկավարժական պրակտիկայի զանազան խնդիրների հետ ծանոթացնել նրանց:

Յեթև տվչալ վաչրում միքանի նախադպրոցական հիմնարկներ կան, այդ դեպքում վորակի բարձրացման աշխատանքները միասին ևն տարվում միացյալ կոլեկտիվի կամ ինքնագարգացման խմբակների միջոցով, համաձայն հատուկ մշակած ծրագրերի: Ընդհանուր-մանկավարժական և հասարական-քաղաքական վորոշ խնդիրներ կարելի չե մշակել լուսաշխտավորների ընդհանուր խմբակներում (պրոֆխմբակներ), I աստիճանի դպրոցի ուսուցիչների հետ և այլն): 1—2 խմբակ ունեցող հիմնարկների աշխատակիցները կարող են միասնալ տեղի I աստիճանի դպրոցի կոլեկտիվին, այնտեղ քննութիւնն ղնելով իրենց հիմնարկի գլխավոր խնդիրները: Սկզբունքային և մեթոդական-մանկավարժական վորոշ խնդիրներ կարելի չե քննութիւնն ղնել և պարզաբանել նաև մեթոդական բուրժուներում և ուսումնական մանկավարժական խորհուրդներում (շրջանի):

ՔԱՂԱՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԿԱՎԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԱՆԵՐԸ¹

Առարկաների անունը	Քանակը	Չ ա զի ե Ր Ը	Առարկաների անունը	Քանակը	Չ ա զի ե Ր Ը
Սեղան	8	մեծ. փոքր. 6 սեղանի Բարձրութ. 58 սմ. 48 սմ. յերկարութ. 123 > 114 > լայնութ. 61 > 57 >	Յոհանոցի սեղան (մանկ.)	1	բարձրութ. 54 սմ. յերկարութ. 90 > լայնութ. 72 < արված չափով.
Աթոս	56	վտաների բարձրութ. 31 > նստ. տեղը 28—30 26—28	Աթոսակ (մանկ.)	8	
Պահարան (պիտույքն.)	3	բարձրութ. 88 սմ. լայնութ. 105 > խորութ. 44 >	Զրաման	3	
Պահարան (սմանեղենի)	1		Բաժակ-ափսե	50	միջակ մեծության
Դարակ	3	յերկարութ. 1 մետր լայնութ. 30 սմ.	Թեյի զգալ	50	
Ավազի արկղ (վտաներով)	2	բարձրութ. 40 սմ. 30 սմ յերկարութ. 101 սմ. լայնութ. 92 > լորտութ. 15 >	Սեղանի զգալ	50	
Կախարան	3	20-ական մասներով. զարակ՝ զլխարկն. համար	Բոլոր	50	1/3 մետր կտոր } յու- րա- քան- չյուր
Լվացարան (թաներով)	3	Ըստ հասակի	Յերեսորբիչ Սավան	15	1 > >
Դարակ (լվացարանի)	3	20-ական կեռեր՝ սրբիչն. 20-ական տեղ, սապոնի և ատամնափոշու համար	Մանճակալ (ծալվող)	15	> >
Դեղատպահարան	1	բոլոր խմբերի համար	Բարձի յերես Բարձեր	15	> >
			Վերմակ(ըսակա)	15	> >
			Կտուց. նյութ	3 կտմ.	ըստ № 8 մեթ. նամ.
			Դանակ	3	բուխ և կտոր ծայր.
			Մկրատ	4	> ծայրերով, միջակ
			Բահեր	10	փոքր շափերի
			Փոցխ	10	> >
			Թուղթ (սպիտ.)	4 ստ.	
			> (գունավոր)	1 >	արլումնի

¹) Հնչված և 50 յերեխայի համար. մեր կանոնադրությամբ քաղաքի նորմալ մանկապարտեզն ունի 60 յերեխա (3 խմբակ), այս դեպքում պետք է դուրսն ալիւրլացնել համապատասխան քանակությամբ: Տրվում է միայն մանկական կահավորությունը: Առողջապահութի արված ցուցակում

Սայլակներ	3	} Տարբեր տարիքի
Պատարակ	3	
Զրցիք	5	1/4 դուլլ
Դուլլեր	4	1/8 »
Տաշտակ	1	30—35 սմ.
Հարթուկ	1	փոքր, բայց իսկական
ձողանակ	3	յերեխաներին հարմար
Սոսց	2	փոքր. թեթև
Ռանդա	2	» »
Դամհան	2	» »
Մուրճ	5	կոթը փայտե, թեթև
Վրձին	25	
Մանկ-գրքեր	25	ցուցակը տես «ժող-լուս» 27 թ. №
Դրագիտ- պիտույքներ		տաներ, լոտո, պլակատ- ներ և այլն.
Բուրգեր	3	միջակ (զուսնավոր)
Թասեր (զուսնավոր)	36	փայտե
Գնդակ	6	6 դմ. և 4 դմ
Ցաակիչ	3	փայտե բանիչներով
Սանձ	6	կուրծքը կաշվից, դանդակ- ներով
Ողակ	6	
Թմբուկ	3	մեծ, կաշվից
Ավազանոթ	4	կոմպլ.

Ներկեր (ջրան.)	300	կամ զուսնավոր
Մատիաներ(սև)	4տոր.	մատիտ
	150	
Կարտոն	60 թ	դեղին և սպիտակ
Թուկ (բարակ)	10կապ	
Սոսինձ	1 կիլ.	
Ասեղ	2 կապ	
Թեղ	10 կոճ	սև ու սպիտակ
Կապ	1 սայլ	
Մեխ	2 կիլո	
Ավազ	2 սայլ	

ՈՐԻՆԱԿԵԼԻ ՍՆՈՒՆԴ 10 ՈՐԿ Ա ՇԱՄԱՐ

1. Նախահաւ 2. հաւ 3. նախընթիքի, 4. ընթիքի

ՅԵՐԿՈՒՇԱԲԹԻ

1. Սուրճ գարուց կամ թեյ կաթով, հաց ու կարագ:
2. Մսից թարմ սոււյ կաղամբով և արմախքով. բրնձով քաշովի,

խնձոր:

3. Կաթ և սպիտակ հաց:
4. Մակարոն կամ թարմ ոշտա (խաշած) կտրագով:

2. ՅԵՐԵՔՇԱԲԹԻ

1. Թեյ կաթով, հաց ու պանիր:
2. Սոււյ գետնախնձորով (կարտոֆիլով), ծեծած միս (կատլետ), հում գաղար:
3. Կաթ, կանֆետ և խմորեղեն:
4. Վինեգրետ խաշած գետնախնձորից, քաղաբից, բազուկից, թթու դրած կաղամբից և վարունգից:

3. ՉՈՐԵՔՇԱԲԹԻ

1. Թեյ, ձու, հաց և կարագ:
2. Բանջարեղենով սոււյ, ծեծած միս մակարոնով:
3. Կաթ, հաց, կարագ և մեղր:
4. Մաննի կաթնով կամ մածուկ:

4. ՀԻՆԳՇԱԲԹԻ

1. Կակաո, հաց ու պանիր:
2. Սպաս, հավի մսից կատլետ կամ ձուկ, պտղից հասուղա (կիսել):
3. Կաթ, հաց ու կարագ:
4. Պաշած գետնախնձոր թթվասերով:

5. ՈՒՐԲԱԹ

1. Թեյ, լիմոնով. հաց ու կարագ:
2. Չիրթմա հավից, բրնձով (գետնախնձորով) կատլետ, թարմ միրգ կամ կամպոտ:
3. Կաթով թեյ, հաց ու կարագ:
4. Մածուկ և հաց:

6. ՇԱԲԱԹ

1. Սուրճ (գարուց) կաթով, ձվածեղ, հաց:

2. Լորախաշու, տապակած ձուկ (իշխան, առանց փշերի), հում դադար:

3. Կաթ ու խմորեղեն:

4. Կաթնով (բրնձով):

7. ԿԻՐԱԿԻ

1. Թեյ կաթով, հաց ու պանիր:

2. Քուֆթիա-բողբաշ, մակարոն լուղով, տակ (կարմիր):

3. Կաթով թեյ, հաց ու կարագ:

4. Բրնձով քաշովի կամ մածուն:

8. ՅԵՐԿՈՒՇԱԲԹԻ

1. Սուրճ կաթով, հաց ու կարագ մեղրով:

2. Սպաս, տապակած կոլոլակ և զետնախնձոր, նարինջ կամ կիսել:

3. Թեյ կաթով, հաց ու կարագ:

4. Վինեգրետ:

9. ՅԵՐԵՔՇԱԲԹԻ

1. Թեյ լիմոնով, հաց ու պանիր:

2. Մսից ապուր բրնձով, սպանաղ տապակած, լեփած չիր (կամ պոտ):

3. Կաթ և խմորեղեն:

4. Մածուն և հաց:

10. ՉՈՐԵՔՇԱԲԹԻ

1. Կակաո, հաց ու կարագ:

2. Մսից ապուր ձավարով, աճարով քաշովի, միրգ:

3. Կաթ, կարկանդակ բրնձով և ձվով:

4. Թարմ ոշտա (խաշած) ձվով:

Իհարկե, սույն սննդացուցակը պայմանական է և կարող է փոփոխություն լինել արկվել ըստ ասարվա լեղանակների (սեզոնների), շուկայի և այլն: Համեմատն զեպս, պետք է ուշ դարձնել սննդի բաղմադանություն, և վորեև կերակուր ցուցակից հանելու դեպքում՝ փոխարինել այն համարժեք սննդանյութով:

Այսպես, որինակ, կանաչեղենի վրա կարելի է ավելացնել տապակած լոբի, շաինատ, լեփած վոսպ, լոբի, սիսեռ, կրուպա (պեղովի, մաննի) պամիդոր, բադրիջան, սոխ:

Կերակուրներից ինկատի ունենալ նաև կարտոֆիլի կատրևոն ու պլուրեն, բրնձի շիլան, մրգերից ու հյութից լեփած կոմպոտը (խոշաբ) ու հասուղան (կիսել) և այսնքը (պաղլիվկա):

Սուրճը լինելու է միայն գարուց պատրաստած, թարմ մրգեր պետք է տալ ըստ հնարավորության հաճախ—խնձոր, տանձ, դեղձ, մու (մալինա), մանավանդ խաղող:

Սև հացն անհրաժեշտ է 5—8 տարեկանների համար, լեթե միայն լավ է թխված: Թերխաշ թարմ ձուն նույնպես ոգտակար է:

Ձկներից տալ՝ իշխանը և բերովի ձկների մեծ տեսակները (սուղակ, լասասինա, սաղան), վորոնք մանր փշեր չունեն:

ՆԱԽԱՐԽՈՐԾԱԿԱՆԻ ՈՐԱԿԱՆ ԱՆՆՐԱՄՔԵՐՔՆԵՐԻ ՆՈՐԱՆՆ

Մթերքներ	3-ից մինչև 5 տարեկան					5-ից մինչև 8 տարեկան				
	Գա- նասիւ լը	Սպի- տա- կու- ցնե- րը	Ածխա- ջրեր	Ծար- պեր	Կալո- րիաներ	Գա- նասիւ լը	Սպի- տա- կու- ցնե- րը	Ածխա- ջրեր	Ծար- պեր	Կալո- րիաներ
Հաց սպիտակ	150,0	10,2	78,0	1,2	378	100,0	6,8	53,0	0,8	252
» սև	—	—	—	—	—	100,0	6,0	48,0	0,5	226
Կաթ	400 (2 քաժ)	13,6	19,2	14,4	268	300,0	10,2	14,4	10,8	201
Միս	50,0	10,0	—	1,5	55	100,0	20,0	—	3,0	110
Յուղ (կովի)	20,0	9,1	0,1	17,1	160	24,0	0,1	0,1	20,9	195
Կարտոֆիլ	100,0	2,0	20,0	—	90	150,0	3,0	30,0	—	135
Հատիկներ (կրուպա)	40,0	4,4	28,0	0,8	140	40,0	4,0	28,0	0,8	140
Բանջարեղեն (թարմ)	100,0	1,4	8,0	0,2	38	100,0	1,4	8,0	0,2	38
Շաքար	25,0	—	25,0	—	100	25,0	—	25,0	—	100
Միրզ	1 տանձ կամ թնձ.	0,2	6,0	—	25	1 տանձ կամ թնձ.	0,3	9,0	—	37
Ջուր	1 հատ	6,0	—	5,0	71	1 հատ	6,0	—	5,0	71
Ընդամենը	47,9	179,3	40,2	1325	58,2	214,5	42,0	1505		

Ծանոթութ. Հացը սովորւմ է նորմալից պակաս, այն պայմանով, վեր ճաշած մթերքներով
 Ըժի՛ բավարարվեն ըստ տախտակի. հակառակ դեպքում հացը քանակը պետք է ավելացնել փոքրերին
 50 գրամ (սպիտակ) և մեծերին 100 գրամ (սև):


Ց Ա Ն Կ


Եջ

Առաջարան	3
1. Նախադպրոցական հիմնարկների տիպերը	5
2. » հիմնարկի կազմակերպումը	6
3. Մանկան կյանքի կազմակերպումը	15
4. Նախադպրոցական հիմնարկի հասարակական-մանկա- վարժական աշխատանքը	41
5. Աշխատանքի պլանավորումն ու հաշվառումը	46
6. Հիմնարկի կուլեկտիվի կազմակերպումը	52

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Մ Ն Ե Ր

№ 1. Կահավորության նորմաները	58
№ 2. Որինակելի սնունդ (10 որվա)	60
№ 3. Սննդամթերքների նորման	62





ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0003637

II
A 23389

Գիրք 50 կուպ. (4 մ.)

1941.



М. Дургарян
ДЕТСАД В ДЕРЕВНЕ В ГОРОДЕ
Госиздат ССР Армении
Эривань. 1929 г.
